№ 132 ՀԻՆԳՇԱԲԹԻ 19 ՅՈՒՆԻՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 19 ՅՈՒՆԻՍԻ № 132

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաև երկրորդ մասնավճար **5** րուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ:

Տարեկան բաժանորդավճարը լրացնողները կը ստանան նաև խոստացված ՊՐԷՄԻԱՆ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՄՈՒԹԱՖԵԱՆԸ իր զաւակներով սրտի խորին կսկիծով յայտնում են՝ առաջինը իր անմոռանալի ամուսնու և վերջինները իրանց սիրելի մօր՝

ԼՈՒՑԻԱ ԿԱՐԼՕՎՆԱ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 16-ին: Յուղարկաւորութիւնը այսօր, հինգշաբթի, յունիսի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Паскевича ул. № 12) դէպի Կաթօլիկաց եկեղեցին (Կաթօլիկական փողոց): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

Խնդրվում է պսակներ և ծաղիկներ չը դնել դագաղի վրա: 613. 2—2

Շողակաթ Մութաֆեանը իր դուստրներով յայտնում է իրանց սիրելի հարսի՝

Լուցիա Կարլօվնա ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 16-ին: Յուղարկաւորութիւնը այսօր, հինգշաբթի, յունիսի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Паскевича ул. № 12) դէպի Կաթօլիկաց եկեղեցին (Կաթօլիկական փողոց): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 614. 2—2

ՎԵՐԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՐԿ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ
ՌԵՍՏՕՐԱՆ ԵՒ ԲՈՒՖԷՏ
Տելեֆօն № 14—66.
Ասիական եւ եւրօպական կերակուրներ
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ ՃԱՇԻ, ԸՆԹՐԻՔԻ ԵՒ ԱՅԼՆ.

ԱՄԵՆ ՕՐ, ցեր. ժ. 2-ից մինչև երեկ. ժ. 5-ը և երեկ. ժ. 10-ից մինչև գիշերվայ ժամը 2-ը
— ՆՈՒԱԳՈՒՄ Է —
ՀԱՄԵՐԳԱՅԻՆ
Լաւագոյն սալօնային խումբը, լաւագոյն սոլիստների մասնակցութեամբ և ղեկավարութեամբ Լ. ՍՏՈՒՊԵԼԻ, նոյնպէս և զինւ. երաժշտախումբ:

ԶԲՕՍԱՆՔ ՆԱՒԱԿՆԵՐՈՎ
առ. (Հ.) 379. 0—8

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ 1914/15 ուսումնական տարվանից հրաւիրվում է մաթեմատիկական առարկաների մասնագէտ ուսուցիչ, բարձրագոյն կրթութեամբ, որ աւանդելու է հանրահաշիւ II դաս. 4 և V դ. 2, երկրաչափութիւն V դ. 2, Թւաբանութիւն I դ. 8 և բնագիտութիւն 3-դ պատ. 2 և 4-դ պատ. 4, ընդամենը 22 դաս: Դասագինը առաջին 12 դասի համար 80-ական րուբլի, 4 դասի համար 70-ական րուբլի և 6 դասի համար 60-ական րուբլի: Բացի դրանից գրաւորների համար տրվում է վարձատրութիւն տարեկան 126 ր.: Այս հաշւով հրաւիրվող ուսուցիչը կը ստանայ տարեկան 1720 րուբլի:

Խնդիրները ուսման դիպլօմների հետ միասին ուղարկել մինչև օգոստոսի 25-ը այս հասցէով. Тифлисъ, Попечительству Армянской Нерсисянъ Семинаріи.

(22, 27, յուլ. 2) առ. 624. 4—1

Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. ԽՈՒԴԱԴԵԱՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ բացվել են հինգ հոգու տեղ, որոնք ընդունվելու են ձրիաբար հետևեալ պայմաններում՝

1) Չքաւոր ընտանիքների աղջիկներ, հայաբնակ բոլոր վայրերից:
2) հայոց եկեղեց.-ծխական ոչ պակաս քան միդասեան և ոչ աւել քան երկդասեան դպրոցաւարտները:
3) Ցանկացողներից ուսման մէջ ամենաառաջադէմները և առողջակազմները:
4) Որոնք ընդունված կը լինեն տեղիս Յովնանեան կամ Գայիանեան դպրոցներից մէկում:
5) Համահաւասար պայմաններում, Թիֆլիսաբնակների հետ նախապատուութիւն կը տրվի գաւառաբնակներին:

Ցանկացողները խնդիր պէտք է տան խորհրդի անուամբ մինչև օգոստոսի 1-ը: Խնդրի հետ պէտք է ներկայացնեն՝ ծննդեան, ծաղկի պատուաստման, բժշկական, դպրոցի աւարտման և չքաւորութեան վկայականները:

Հասցէն՝ Թիֆլիս, Արաս-Արտէեան հրապ. № 7. (Հ.Ե.) առ. 619. 3—1

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ 1914/15 ուսումնական տարվանից հրաւիրվում է միջնակարգ ցենզ ունեցող ուսուցիչ կամ ուսուցչուհի, որ աւանդելու է հայոց նոր լեզու 3-դ պատ. 6 դաս և 4-դ պատ. 12 դաս, ընդամենը 18 դաս: Այդ դասերի համար՝ հաշւած դասագինը 50-ական րուբլի, կը տրվի հրաւիրվող դասատուին վարձատրութիւն տարեկան 900 ր. և գրաւորների համար 120 ր., ընդամենը 1020 րուբլի:

Խնդիրները ուսման վկայագրերի հետ միասին ուղարկել Հոգաբարձութեան մինչև օգոստոսի 25-ը այս հասցէով. Тифлисъ, Попечительству Армянской Нерсисянъ Семинаріи.

(22, 27, յուլ. 2) առ. 623. 4—1

ՑԻՐԿ
Ֆ. ԻՊԱՏՕՎԻ

Այսօր, հինգշաբթի, յունիսի 19-ին, Ոլիմպիական խաղերի խոշոր երեկոյթ: Այսօր ամեն ինչ նոր է, ամեն ինչ օրիգինալ: Այսօր մասնակցում են՝ ամեն տեսակ կենդանիներ վարժեցնող նորեկ Եզօրօվը՝ իր չալտոմօրտալիստ շնով, լարախաղաց օր. Լիդիա, ակրօբատներ Րօսսինիները, նորագոյն պարեր կատարող քոյրեր Սօրօլէվսկիները, երաժիշտ-էկսցենտրիկներ Րօզէտտիները և կօր-դը-բալէտը՝ ղեկավարութեամբ օր. Ելենա Իպատօվայի: 618. 1—1

ԲԺԻՇԿ
Տ. ՄԱԿԱՐԵԱՆ
Մասնագէտ վեներական, միզասեռական, կաշուի և սիֆիլիս հիւանդութիւնների, մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը
ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
Верхній бульв., д. Зипаловой.
(Օ. Մ.) առ. 547. 12—8

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Արժանացած մեծ պարգևի: Վաճառվում են ՌՈՒՍԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում:
Փաբրիկային իսկական գներով:
Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պաստառներ վերջին ոճի, ինչպէս էժանագիններ, նոյնպէս և թանգարժէքներ: Բացառապէս լոյս չափն է 11¼ արշ. երկար:
Սէզօնային նմուշները ուղարկվում են ՁՐԻ և օտար քաղաքներում:
Բաժանմունքը Թիֆլիսում.
Обои фабрики Бр. Тарнополь. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3—55.
(Գ. Հ.) առ. 309. 50—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Ասսիստենտ Բերլինի պրօֆ. Պօզների)
ԱՐԴԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԲԵՐԼԻՆԻՑ և մայիսի 1-ից ընդունում է հիւանդներին ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ: (Կովկասեան հանքային ջրերում):
Հասցէն՝ Пятигорскъ, Елизаветинская ул. д. Архипова, за соборомъ.
(Կ. Հ.) առ. 104. 50—38

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարաբեան
Կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ, տեղափոխվելով հանքային ջրերը՝ Պեատիգորսկում և Եսէնտուկում մայիսի սկզբից ընդունում է հիւանդներ:
Հասցէն՝ Пятигорскъ, за соборомъ, Елизаветинская ул.
առ. (Ե.Գ.Կ.) д. Архипова. 458. 25—18

ԲԺԻՇԿ
ԼԵՒՈՆ ԱԹԱԲԷԿԵԱՆ
Յունիսի 10-ից մինչև օգոստոսի 20-ը
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ՇՈՒՇԻ
Լօրիս-Մելիքեան փողոց, սեփ. տունը:
(Ե. Հ. Կ.) առ. 578. 10—5

ԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տելէֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելօվզօրով
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նօվիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Տահպարոնեանց
(Գ.Կ.) առ. 868. 100—64

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւստրիական գահաժառանգ արքիդուքս Ֆրանց Ֆերդինանդի տրագիկական մահը, անկասկած, քաղաքական մի խոշոր դէպք է ներկայանում և կարող է լուրջ բարդութիւններ առաջացնել քաղաքական աշխարհում.

Սպանութիւնը, անշուշտ, քաղաքական բնոյթ ունի և կատարված լինելով մի այլ ազգութեան պատկանող անձանց ձեռքով—մինչև այժմ ստացված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մարդասպանները սերբեր են—պէտք է գրգռէ ազգայնական թշնամութիւն, պէտք է բարդութիւններ առաջ բերէ միջազգային յարաբերութիւնների մէջ:

Աւստրո-ունգարական պետութեան գոյութիւնը արդէն վաղուց խախուտ հիմունքի վրա է կանգնած. Մի ցնցում, և նա կարող է տապալվել. Եթէ այդ ցնցումը մինչև այսօր տեղի չէ ունեցել, այդ էլ միակ ծերունի Ֆրանց-Յովսէփ կայսրի շնորհիւ, որին սիրում և յարգում է ժողովուրդը և որին վիշտ պատճառելուց զգուշանում է նա: Նա է եղել այն միակ օղը, կապը, որ մինչև այսօր միացրել է պետութեան տարբեր ազգութիւնները և իրար հակառակ տարրերը: Եւ արդէն շատ հաւանական ճշմարտութիւն էր նկատվում, որ Ֆրանց-Յովսէփ ծերունի կայսրի մահվամբ պետութիւնը բաժան-բաժան լինի: Ունգարիան, որ արդէն գրեթէ մի անկախ պետութիւն է, շտապելու է թօթափել կախման վերջին նարօտը. Աւստրիայի գերմանական տարրերը և մասերը ձգտելու են միանալ գերմանական պետութեան հետ, իսկ սլավեան տարրերը կամ կազմելու են ֆեդերացիա և կամ միանալու են համապատասխան սլավեան երկրների հետ:

Սակայն արքիդուքս Ֆրանց Ֆերդինանդը նկատված էր իբրև մի անձն, որ կարող էր խոչընդոտ հանդիսանալ այդ ձգտումներին. Նա անդրալեռնական-կաթօլիկ-միապետական հակումներ ունէր և կարող էր հետևել ագրեսիվ ուղղութեան, թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ: Նրա թագաւորմամբ պետութեան մէջ պառակտումը, գրգռումները, յեղափոխական ձգտումները աւելի մեծ թափ և զարկ պէտք է ստանային: Նա այն վեհապետներից էր, որոնք ձգտում են ստեղծել մեծ և հզօր պետութիւն, նուաճողական ագրեսիվ նպատակներով և բնաւ տրամադիր չեն փոքր ազգութիւնների անկախութեան կամ ազատագրական ձգտումները նպաստաւորել:

Սակայն հարց է, թէ քաղաքական այդ ոճիրը գործողները կը հասնեն իրանց նպատակին, այսինքն այդ ոճրագործութեամբ կարո՞ղ են նրանք վերացված համարել խոչընդոտը: Չենք կարծում. չենք կարծում, որ սպանութեամբ, տէրրօրով կարելի լինի երբևիցէ հաստատել, ստեղծել որևէ իրաւական կարգ կամ ռէժիմ: Ազգութիւնները իրանց փոխադարձ վէճերը, գժտութիւնները, իրաւունքների սահմանումը պէտք է կարգադրեն փոխադարձ համաձայնութեամբ, արդարութեան և խղճմտանքի օրէնքների հիման վրա:

Հաբսբուրգեան ազգատոհմը այնքան մեծ է, որ միշտ կարող է իր անդամների միջից նոր գահաժառանգներ, նոր վեհապետներ յարուցանել: Մի սպանված գահաժառանգի կը փոխարինի մի այլ գահաժառանգ: Դրանով խնդիրը չի լուծվի: Ընդհակառակը, այժմ թըշնամութեան, ատելութեան զգացումները աւելի ևս կուժեղանան և հարցը աւելի կնճռալից և բարդ կը դառնայ:

Չէ կարելի չը շեշտել և այն հանգամանքը, որ Ֆրանց Յովսէփ զառամեալ կայսրի գլխին, արդարև, հետզհետէ թափվում են այնքան մեծ ընտանեկան և պետական դժբաղդութիւններ: Զարմանալ կարելի է այն մեծահոգութեան, քրիստոնէական առաքինութեան վրա, որով ալեոր վեհապետը կրում է իր ծանր վշտերը, ականատես լինելով իր սեփական միակ որդու՝ գահաժառանգ Ռուդօլֆի, իր ամուսնու՝ կայսրուհի Ելիզավէտայի և այժմ էլ իր երկրորդ գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի տրագիքական վախճաններին:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 և 17 յունիսի

ՍԱՐԱԵՎՕ.—Առաւօտը ցիրուցան արված ցուցարարները նորից ժողովվեցին քաղաքի ուրիշ մասերում: Ցուցարարներին միացաւ խուժանը և ցոյցերը ստացան աւելի սպառնական բնոյթ: Ամբոխը ջարդում էր սերբիական խանութները:

Քաղաքի բոլոր մասերը լի են պահակպիկետներով: Առաւօտը մի անյայտ ուսանող փողոցում ռումբ նետեց, որից թեթև վիրաւորվեց անցորդ մի մահմեդական: Ուսանողը ձերբակալվեց:

Արքիդուքսի կեանքի դէմ մահափորձ կատարած երկու հոգուց բացի, ձերբակալված են ուրիշ մի քանի անձինք ևս, որոնք կասկածվում են մահափորձին մասնակցելու մէջ: Մինչև օրս կատարված քննութիւնը պարզել է, որ երկու յանցագործները ծնվել են Բօսնիայում, ուղղափառներ են: Ցաբրինօվիչը խոստովանեց, որ մահափորձից քիչ առաջ նա Բելգրադումն էր, ուր ստացաւ ռումբ արքիդուքսի վրա նետելու համար: Երկրորդ յանցաւորը խոստովանեց, որ Բելգրադից վերադառնալու ժամանակից նրա մէջ մտադրութիւն ծնվեց գնդակահարել որևէ բարձրաստիճան անձի, որպէսզի վրէժ առնէ սերբ ազգին ճնշելու համար:

Պարզվեց, որ Ցաբրինօվիչի նետած ռումբը հէնց ինքն էր պատրաստել, լի էր մեխերով, արճճէ կտորներով ու պայթուցիկ նիւթերով: Նոյն տեսակի էր և երկրորդ ռումբը, որ գտնվեց աւստրիական գահաժառանգի անցած ճանապարհի վրա: Հաղորդում են, որ մտնելով քաղաքային տանը՝ առաջին մահափորձից յետոյ արքիդուքսը դիմեց քաղաքագլխին, որ պատրաստվում էր ողջոյնի ճառ արտասանել, հետևեալ խօսքերով. «Գալիս եմ ձեզ մօտ՝ Սարաեվօ, իսկ մեզ վրա ռումբ են նետում. դա գարշելի է»: Դքսուհին սկսեց հանգստացնել ամուսնուն, որից յետոյ գահաժառանգն ասաց քաղաքագլխին. «Այժմ կարող էք խօսել»: Լսելով մինչև վերջը քաղաքագլխի ողջոյնը, գահաժառանգը կնոջ հետ նորից աւտոմօբիլ նստեց հիւանդանոց գնալու համար: Ի նկատի ունենալով, որ հասարակութիւնը ցրվել էր արդէն, նոր նախազգուշական միջոցներ ձեռք չառնվեցին, ինչպէս պնդում են, հէնց արքիդուքսի ցանկութեամբ: Ֆրանց-Յովսէփի անուան փողոցի շրջադարձում, ականատեսների պատմելով, կանգնած էին երեք երիտասարդ սերբիական ծաղիկները ձեռքերին: Նրանց մօտեցան երկու աղջիկ, փոխանակեցին մի քանի խօսքեր և յետոյ դիմեցին մօտիկ կանգնած տիկնանց, խնդրելով հեռանալ այդ տեղից, որովհետև երիտասարդները կասկածելի տեղիք են տալիս: Այդ ժամանակ, փողոցի նեղ լինելու պատճառով, դանդաղ մօտեցաւ արքիդուքսի աւտոմօբիլը: Երբ աւտոմօբիլը գտնվում էր յիշեալ երիտասարդներից երեք կամ հինգ քայլ հեռաւորութեան վրա, լսվեց երկու կրակոց:

Գահաժառանգի և կնոջ մարմինները զմռսելուց յետոյ, կատարվեց հանդիսաւոր պատարագ, որից յետոյ դագաղները ծածկվեցին, կնքվեցին և դրվեցին դիակառքի վրա, շրջապատված տրօպիկական բոյսերով ու մոմերով: Երկու կողմում դրվեց պատուաւոր պահակախումբ: Դահլիճը, որ ծածկված է սև մահուդով, լի է պսակներով: Ամբողջ օրը իրար ետևից մտնում էին օֆիցերներ և պաշտօնեաներ հանգուցեալի դիակի առաջ աղօթելու համար:

Երբ շարժվեց սգերթը պատշաճ երաժշտութեամբ, աշտարակից արձակեցին 24 թնդանօթ: Սգերթի առաջից գնում էին մի քանի վաշտ հետևակ զինւոր ու հեծելազօր, որոնց ետևից՝ պալատականները, փոխարքան, գեներալիտէտը, օֆիցերները և պաշտօնեաները: Հանգուցեալների աճիւններին հրաժեշտ տալու համար ժողովվել էր հոծ բազմութիւն: Ժամը 6½-ին սգերթը հասաւ կայարան: Գնդերը հրացաններից համազարկեր պարպեցին: Մի վագոնի մէջ դրվեցին դագաղները և վագոնը կցրին արագ գնացքին, որը ժամը 7 ու 10 րոպ. ազգային օրհներգի ու թնդանօթաձգութեան տակ դիմեց դէպի Մէտկօվիցա, ուր դագաղները կը փոխադրեն ռազմանաւի վրա:

Սէյմի պրեզիդիումը դիմեց Բօսնիայի և Հերցեգօվինայի ազգաբնակութեանը մի կոչով, որի մէջ խօսվում է գազանային, ստոր ոճիրի մասին և հաստատ հաւատ է յայտնվում, թէ ազգաբնակութիւնը պատրաստ է ամեն ինչ զոհաբերել Հաբսբուրգեան տան բարեկեցութեան ու բարգաւաճութեան համար. Կոչը միաբերան դատապարտում է ոճիրը, ագիտատորներին և պատանեկան մոլորեցնողներին: Կոչը յորդորում է ծնողներին՝ հեռու պահել իրանց զաւակներին անխիղճ ագիտատորներից, որոնք թունաւորում են իրանց զաւակներին անիշխանութեան գաղափարներով:

Յունիսի 16-ին ցերեկով նետվեց 2 ռումբ, որ առանձին վնաս չը տուեց: Պայթումից թեթև վիրաւորվեց մի անցորդ: Զարագործները երեան չեն հանված։

Զինւորական դրութեան հիման վրա հիւրանոցները և սրճարանները փակվում են երեկ. ժ. 8-ին, իսկ տների դռները՝ երեկ. ժամը 10-ին։

Լրագրական տեղեկութիւնների համաձայն, ձերբակալված է սերբ-արմատական օպպօզիցիօն ժողովրդական խմբակի նախագահ Աթանասեվը։

Մօստարում խօրվատները և մահմեդականները ցոյց կազմեցին։ Լսվեցին բացագանչութիւններ ի պատիւ կայսրի և սպառնալիքներ սերբերի հասցէին։ Խօշոր անկարգութիւններ տեղի չունեցան։ Ամբոխը ջարդեց մի քանի պատուհան։ Զօրքերը վերականգնեցին կարգ ու կանօնը։

Հակասերբիական ցոյցերի ժամանակ մի սերբ, որ կանգնած էր իր կրպակի առաջ, մի քանի անգամ կրակեց։ Գնդակը կպաւ ցուցարարներից մէկի մէջքին։ Ամբոխը յարձակվեց սերբերի վրա, որոնցից մէկին ծանր կերպով գանակոծեց և յանձնեց ոստիկանութեան ձեռքը։ Նրա մօտ գտնվեց մեծ քանակութեամբ փամփուշտ։

Լրագիրներում երեացած այն լուրերը, թէ մահափորձ է կատարվել փոխարքայ Պօտիօրէկիի կեանքի դէմ և Մաստարի հրդեհի մասին—մտացածին են։

Գիշերը խաղաղ անցաւ։ Ձերբակալվեցին 6 հոգի, որոնց ով լինելը պարզելուց յետոյ ազատ թողին։

Կայսրը յանձնեց կառավարութեանը յայտնել սէյմի պրեզիդիումի մէջ մտնող սերբերի, խօրվատների և մահմեդականների ներկայացուցիչներին շնորհակալութիւն ցաւակցական հեռագիրներ ուղարկելու համար։

ՎԻԵՆՆԱ.—Սարաէվօյից և Զագրէբից բացի, նոյնպէս այլ տեղերից հաղորդում են հակասերբիական ցոյցերի մասին։ Սարաէվօյի քաղաքագլուխը պաշտօնական ճառում յայտնել է, որ մահափորձը պատրաստվել էր արտասահմանում։

Զագրէբում առանձնապէս աղմկալի էին ցոյցերը խօրվատական «Պօկրէտ» լրագրի խմբագրատան առաջ։

Տորիայում գերմանական ամբոխը ցոյց սարքեց թօքախտաւորների սանատօրիայի դէմ, ուր բժշկվում են սերբ օֆիցէրներ և գտնվում է սերբ բժիշկ։

Գերմանական լրագիրները, բացի «Ֆրեմդենբլատից», մեղադրում են Սերբիային ազգային պրօպագանդայի մէջ, չը շօշափելով սակայն սերբ կառավարութեան։

«Կօր. Բիւրօյին» հաղորդում են Սարաէվօյից, որ հակասերբիական ցոյցի ժամանակ տեղի ունեցաւ ընդհարում զօրքերի հետ։ Կան շատ վիրաւորվածներ և ձերբակալվածներ։ Ցուցմունքները շարունակվում են։

Իշխանութիւններն անընդհատ ստանում են ցաւակցական հեռագիրներ երկրի ամբողջ ազգաբնակութիւնից։

Տեղի ունեցաւ համայնական և քաղաքային խորհուրդների արտակարգ նիստերը, որոնք փոխվեցին հսկայական սգային ցոյցի։

«Կօր. Բիւրօյին» հեռագրում են Դուրացցօյից, որ ցերեկով պրինց Վիդը այցելեց աւստրօ-ունգարական միսսիան և յայտնեց դեսպանին ցաւակցութիւն արքիդքսի մահվան առիթով։

Այսօր առաւօտեան կայսրն ընդունեց արքիդուքս Կարլ Ֆրանց-Յօզէֆին, յետոյ մինիստր-նախագահներ՝ Տիսսին և Շտուրկին, ցերեկով՝ արտաքին գործերի մինիստր Բերխտօլդին։

Սարաէվօյից տեղեկացնում են, որ շատ սերբեր փախել են քաղաքից, երկիւղ կրելով բռնութիւններից։ Ցոյցերի ժամանակ կալանաւորվել են 100 հոգի, ի թիւս որոց մի քանի սերբ ժուրնալիստ։ Սերբերի խանութները քարուքանդ են են արված։ Մի սերբ կնոջ բնակարանում գտնվել է ռումբ։ Ցուցարարների մեծամասնութիւնը բաղկացած է մահմեդական խուժանից։

Կ. ՊՕԼԻՍ.—Սուլթանը ցաւակցական հեռագիր ուղարկեց աւստրիական կայսրին։

Պալատը յանձնարարեց նախագահին ուղարկել ցաւակցական հեռագիր աւստրիական կառավարութեանը։

ԱԹԷՆՔ.—Վենիզէլոսը ցաւակցական հեռագիրներ ուղարկեց Բերխտօլդին և Տիսսին։

Կօնստանտին թագաւորը Ֆրանց-Յօզէֆ կայսրին ուղարկեց համակրանքի ու ցաւակցութեան հեռագիր։

ԼՕՆԴՕՆ.—Գրէյը ցաւակցական հեռագիր ուղարկեց բրիտանական կառավարութեան և իր կողմից աւստրիական կառավարութեանը։

ԲԵԼԳՐԱԴ.—Ֆինանսների մինիստրը, մինիստրների խորհրդի նախագահի և արտաքին գործերի մինիստրի բացակայութեան պատճառով, կոմս Բէրխտօլդին ուղարկեց ցաւակցական հեռագիր սերբ կառավարութեան կողմից գազիր ոճիրի առիթով։ Սկուպշչինայի նախագահը Վիէննա և Բուդապեշտ ուղարկեց ցաւակցական հեռագիրներ։

Պաշտօնական «Սամօուպրավան» և սերբիական «Պրէսս-Բիւրօն» պաշտօնապէս դատապարտում են Սարաէվօյում կատարված մահափորձը։

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատում Գրէյը համակրանք յայտնեց Աւստրօ-Ունգարիային ողբերգական դէպքի առիթով։

ՄԷՏԿՕՎԻԶԻ.—Գահաժառանգ զոյգի մարմինները բերելու առիթով փողոցներում ծածանվում են սև դրօշակներ, լապտերները ծածկված են սևով, ռազմանաւերի վրայից դրօշակները իջեցված են։

Ժամը 6-ին արտակարգ գնացքով Սարաէվօյից բերին հանգուցեալների մարմինները։ Կայարանում դրված էր պատուաւոր պահակախումբ և գտնվում էին փոխարքան, իշխանութեան և համայնական վարչութեան ներկայացուցիչները. ազգաբնակութիւնը կանգնած էր շարքերով։ Դագաղները փոխադրեցին «Դալմատ» զրօսանաւը, որ ժամը 9-ին դիմեց դէպի հիւսիս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Թագաւոր Կայսրը բարեհաճեց 12 օրով սուգ նշանակել պալատում Ֆրանց-Ֆերդինանդի մահվան առիթով։

ԶԱԳՐԷԲ.—Սէյմի նիստին կառավարութեան անդամները և պատգամաւորները եկան սև կապած։ Երբ նախագահը ամբիօն բարձրացաւ, սկսվեց աղմուկ. Ֆրանկի կուսակցութեան անդամները աղաղակում էին մեծամասնութեան՝ «Սերբերը դուրս. կորչի կօալիցիան, կորչին մարդասպանները. սպանութիւնը յօրինված է Բէլգրադում»։ Երբ նախագահը փորձեց ճառը սկսել ցաւ յայտնելով արքիդքսի մահվան առիթով, ֆրանկիստները աղաղակեցին՝ «Թոյլ չենք տայ խօսել» և սկսեցին վիրաւորել մեծամասնութեան։ Աղմուկի մէջ նախագահը ընդհատեց նիստը։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Սարաէվօյի դէպքերի առիթով կայացաւ պատգամաւորների պալատի սգանիստ։ Կառավարութեան ներկայացուցիչները և բոլոր կուսակցութիւնների հռետօրները վշտակցութիւն ու զայրոյթ յայտնեցին մահափորձի առիթով և ընդգծեցին իրանց հաւատարմութիւնը կայսրին։

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորների պալատում մինիստր-նախագահը և պալատի նախագահը ցաւակցութիւն յայտնեցին Ֆրանց-Յօզէֆ կայսրին՝ արքիդքսի մահվան առիթով։

ԴՈՒՐԱՑՑՕ.—Թուրխան-փաշան աւստրիական ականանաւով մեկնեց Վիէննա ներկայ գտնվելու Ալբանիայի կառավարչի կողմից արքիդքսի թաղմանը։

ԲՐՆՕ.—Չեխ սօկօլների կօնգրէսը։ Քաղաքի մէջով 100,000 չեխեր անցան հանդէսով։ Յետագայ տօնակատարումը ընդհատվեց իշխանութեան պահանջով, ի նկատի ունենալով արքիդքսի մահը։ Սերբերը և ռուս սօկօլների ներկայացուցիչները իսկոյն մեկնեցին։

Քաղաքում տեղի ունեցան խոշոր ընդհարումներ չեխերի և գերմանացիների միջև այն պատճառով, որ գերմանացիք Սարաէվօյի դէպքերի պատճառով չեխերին անուանեցին մարդասպաններ։ Կան շատ վիրաւորվածներ ու կալանաւորվածներ։

ԲԵՐԼԻՆ.—Վիլհէլմ կայսրը մեկնեց Վիէննա արքիդքսի թաղմանը ներկայ գտնվելու համար։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16—17 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Բեռլինի ռուսաց դեսպանը գերմանական կառավարութեանը յանձնեց այն նօտան, որի մէջ բերված են այն առարկութիւնները, որ առաջադրում է ռուս կառավարութիւնը Գերմանիայում ռուսահպատակներից տուրք վերցնելու դէմ։ Նօտայի վերջում ռուս կառավարութիւնը առաջարկում է վէճը յանձնել Հաագայի չէզոք դատարանի վճռին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Սենատոր Վատացին, համաձայն խնդրագրի, քայքայված առողջութեան պատճառով արձակվում է պաշտօնից, իրաւունք ունենալով կրել համազգեստը և սենատորի կոչումը։

ՄՕՍԿՎԱ.—Առաւօտեան եկան անգլիական հիւրերը ուղեկցութեամբ ռուս ծովային օֆիցէրների։ Կայարանից հիւրերը դիմաւորողների հետ աւտոմօբիլներով մեկնեցին «Մետրօպօլ» հիւրանոցը։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ.— Երկու գնացքների ընդհարումից սպանվեցին երկու կօնդուկտօր, ծանր վիրաւորվեցին հինգ մարդ։ Ջարդվեցին 20 վագօն։

ՊՕԼՏԱՎԱ.— Նահանգի զանազան տեղերից յուզալի տեղեկութիւններ են ստացվում հեղեղից առաջացած վնասների մասին։ Կօնստանտինօգրադի գաւառում կայծակնահար են եղել երկու մարդ։

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատում Գրէյը հանդէս եկաւ բացատրութիւններով պարսկական գործերի առիթով։ Նա մատնանշեց, որ թէև վերջին ժամանակներս տեղի ունեցան այնպիսի փաստեր, որոնցից երեւում է, թէ ռուսական ազդեցութիւնը Պարսկաստանում ուժեղանում է քաղաքացիական վարչութեան տեսակէտից, սակայն այդ փաստերը չեն հանդիսանում Ռուսաստանի համաձայն քաղաքականութեան արգասիք, այլ սոսկ հետևանք առանձին ռուս հիւպատոսական ներկայացուցիչների քայլերի։ Այդ փաստերը քննվեցին անգլիական և ռուսական կառավարութիւնների ձեռքով, ընդհանուր բարեկամական վճիռ կայացնելու նպատակով, ինչպէս նաև յետագայ իրերի կարգը որոշելու համար։

Ապա շօշափելով Ալբանիայի գործերի դրութիւնը, Գրէյը յայտնեց, որ նա դէմ է բրիտանական զօրքերը Ալբանիա ուղարկելուն։

ԴՈՒՐԱՑՑՕ.—Քաղաքում սկսվեցին կողոպուտները մալիսօրների ձեռքով։

Տրամադրութիւնը քաղաքում յուզալի է այն լուրերի ազդեցութեան տակ, թէ ապստամբները ստացել են մեծ քանակութեամբ ռազմամթերք։

ՄԱԴՐԻԴ.—Հացի թանգութեան պատճառով ամբոխը քար ու քանդ արեց փռները. մի քանի հացթուխներ ծեծվեցին։

ՏԱՑՑԱ.—Գեներալ Գուրոյի զօրամասը փախուստի դարձրեց թշնամուն. Ֆրանսիացիների կորուստներն են 8 սպանված և 20 վիրաւոր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

—

Պետական Դումայի անդամ Միք. Պապաջանեան հեռագրում է մեզ յունիսի 17-ից.

«Համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ի խնդիրքի, որ պաշտպանեց Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվ, Բարձրագոյնս ներման արժանացան «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի առիթով հետևեալ դատապարտվածները.

«1) Մեհրաբեան (Սրինգ), 2) Ա. Թայիրեան, 3) Մատինեան, 4) Սողոմոնեան, 5) Աւագեան, 6) Առստամեան, 7) Աղախանեան, 8) Անիսոնեան, 9) Գրիգորեան, 10) Ալ. Շաքարեան (ուսանող), 11) Ղարիբեան, 12) Աստուածատրեան, 13) Տէր-Մարտիրոսեան, 14) Դանիէլեան։

«Ղազարեանը, բժ. Համօ Օհանջանեանը, Մամիկոնեանը, Մարկոս Դուլթեանը, Համ. Սրուանձտեանը ազատվել են՝ Ղազարեանը տաժանակիր աշխատանքներից և յետագայում լինելիք աքսորից, իսկ մնացածները՝ աքսորից, իրաւունք ստանալով բնակվել ամենուրեք, բացի յընթացս 5 տարիների՝ մայրաքաղաքներում ու մայրաքաղաքների նահանգներում։

«Միևնոյն ժամանակաշրջանում յիշեալ անձինք, փոխարէն բոլոր առանձին իրաւունքներից ու արտօնութիւններից զրկվելու, գտնվելու են ոստիկանական հսկողութեան ներքոյ»։

ՀԻՆ ՈՅԺԸՐԸ «ՆՈՐ-ՈՅԺԻ» ԷՋԵՐՈՒՄ

III

№ 2-ում «Նորերից մէկը», բայց էապէս—ի հարկէ—հիներից մէկը, շատ զայրացած է Վահան Տէրեանի դասախօսութիւնից։ Այդ պարոնի համար կարծէք տարրական կօրրեկտութեան սահմաններ գոյութիւն չունեն. «Տղայամիտ» բառով սկսում է և Վահան Տէրեանին «յիմար» անուանելով վերջացնում։ «Տէրեան բանաստեղծները,—գրում է նա,—ծիծաղելի են, երբ իրանց մտքերը հրապարակ հանելով յանուն բանւորութեան են խօսում և նրա շահերի գիտակցողները հանդիսանում»։ Վ. Տէրեանի դասախօսութիւնը մի լուրջ ուսումնասիրութիւն էր, ուր որոշ անհերքելի ճշմարտութիւններ կային և որ միայն հայ հասարակութեան գիտակից անդամները ողջունել կարող են և ցանկալի կը համարեն այդպիսի շատ դասախօսութիւններ լսել, քան թէ այն տափակ ու տիրացուական ճառերը, որոնք տեղի են ունենում մի այլ տեղ։ Նոյն յօդուածում կարդում ենք. «Ունկնդիրները քիչ էին, եղածի մեծ մասն էլ ջահել օրիորդներ էին, որոնք, երևի, եկել էին աւելի շատ բանաստեղծ Տէրեանին տեսնելու, քան նրա «քաղաքական մտքերը լսելու»։ Մի՞թէ յօդուածագրին յայտնի չէ, թէ ի՛նչ հասարակութիւն է յաճախում Հայ Գրողների Ընկ. գրակ. երեկոյթները, որ նրա—նորերից մէկի—գաղափարակիցները արձանագրում են իրանց թերթում, թէ «դահլիճը լիքն էր». մի՞թէ այդ նոյն հասարակութիւնը և աւելի փոքրահասակ աշակերտ-աշակերտուհիներ չեն լինում այդ դահլիճը «լցնող» հասարակութիւնը, որը $^3/_4$-ն է կազմում։

Այնուհետև պարոնը անցնում է իր «խորհուրդներին» և խորհուրդ տալիս, որ Տէրեանը ժամանակ չը կորցնէ այդպիսի բաների վրա, այլ ոտանաւոր գրէ և բանւորների շահերի գիտակցող չը հանդիսանայ և այլն։ Ես միանգամայն աւելորդ և անտեղի եմ համարում յօդուածագրի այդ նկատողութիւնը, քանի որ նա ոչնչով չապացուցեց, որ բանւորների շահերի տեսակէտից այդ դասախօսութիւնը վնասակար էր, կամ լի էր հակասութիւններով, այլ տաք հայհոյանքի տարափով սկսեց ու հայհոյանքով էլ վերջացրեց յօդուածագիրը։

№ 3-րդում դարձեալ «Նորերից մէկը» գրում է. «Ներկայ հասարակակարգը բանւորական շարժումների թշնամին է. Նա դեռ չէ գիտակցում այդ դասի լայն իրաւունքները»։

Այստեղ արդէն պարզ և որոշ կերպով ապացուցվում է այն, որ պարոնը միանգամայն զուրկ է դասակարգային սօցիալ-պատմական հասկացողութիւնից և մանր բուրժուական ու մեշչան դատողութիւնն է երևան գալիս, որ երբ թէ կը գայ մի օր, երբ ներկայ հասարակակարգը կը գիտակցէ պրօլետար դասի լայն իրաւունքները և հետևապէս ինքնակամ կը դադարէ շահագործելուց ու վերջ կը դնէ բանւորի այն դժոխային կացութեանը, որին ներկայումս նա ենթակայ է»։ Տիրող «ներկայ հասարակակարգը» համարել «թշնամի»—որովհետև նա դեռ չէ գիտակցում բանւորական դասի լայն իրաւունքները»—միայն կարող են նրանք, որոնք կամ սօցիալ-պատմական դասակարգային զարգացման հետ ծանօթ չեն, կամ թէ դիտաւորեալ կերպով ուզում են բանւոր դասակարգին ասել, որ մի վրդովվէք, բոլորովին հանգիստ եղէք և լաւ համբերատարութեամբ կատարեցէք այն բոլորը, ինչ որ ձեզ ասում են բուրժուական իդէօլօգները՝ «Ներկայ հասարակակարգը թշնամի է ձեզ», որովհետև դեռ չէ հասունացել գիտակցօրէն ըմբռնելու ձեր լայն իրաւունքները, և համոզված եղէք, որ կը գայ մի օր, երբ նա կը գիտակցէ և առանց այլ և այլութեան վերջ կը տայ ձեր ներկայ անտանելի կացութեանը։ Այսպէս կարող են դատել միայն նրանք, որոնք դեռ ևս ոչ մի առնչութիւն չունեն պրօլետարիատի ազատագրման հետ և ցանկանում են մթագնել նրա դասակարգային գիտակցութիւնն ու քօղարկել այն ճշմարտութիւնը, որ կոչվում է՝ բուրժուազիան կամաւորապէս երբեք չի բարելաւել և չի բարելաւելու բանւորի դրութիւնը, որովհետև բանւորի դրութեան բարելաւման հետ՝ կապված է բուրժուազիայի շահերի վնասը։

Պարոնը հարցին չէ մօտեցել դասակարգային տեսակէտից ելնելով այն աշխարհահայեացքից, ինչ աշխարհահայեացք դաւանում է գիտակից բանւորութիւնը, այլ նա մօտեցել է մանր բուրժուական ակնոցներով, և դա շատ հասկանալի է մի մանր բուրժուական օրգանի էջերում։

№ 3-ում խմբագրական յօդուածում կարդում ենք. «Կրկնում ենք, թիւրքահայ դատը խորթ չէ կարող լինել աշխատաւորութեանը և նրա մասնակցութիւնն ունի ոգևորիչ նշանակութիւն»։ Առաջին անգամը չէ, որ մենք կարդում ենք հայկական մանր բուրժուական նացիօնալիստների օրգանում այդպիսի դարձուածքներ, և մենք չենք զարմանում, որ ներկայումս հայ բանւորի անունից խօսելով հանդերձ՝ նրանք նորից իրանց հին երգն են երգում, միայն թէ այժմ ուրիշ անուան տակ է, և տարբերութիւնը մեզ համար պարզ պէտք է համարել, ի նկատի ունենալով վերև յիշածներս։

Նախ պէտք է ասել, որ հէնց այդ դրսի մասնակցութիւնն է եղել պատճառ՝ թիւրքահայ ազատագրման գործում, որ տուժել է երկու երկիրների հայ ժողովուրդը։

Թիւրքահայ ժողովուրդը տարիներից ի վեր սպասել է, որ դրսից անեն իրան համար ամեն բան։ Նա, թիւրքահայը, մի իներտ մասսա է եղել իր ազատագրման գործում. գիտակցութեան բացակայումը, ինիցիատիվ տենդենցը և ինքնագործունէութեան գաղափարը խորթ են եղել նրա համար, և դա առաջ է եկել շնորհիւ այն քաղաքական կուսակցութեան, որը պատմականօրէն իրան կոչված է համարել ղեկավարը հանդիսանալու թիւրքահայ ժողովրդի ազատագրման գործում։

Այդ քաղաքական կուսակցութիւնը՝ աւելի շատ տարված է եղել ռոմանտիկ վերացական գաղափարներով. ու կեանքի իրականութեան օբյեկտիվ տուեալները ըմբռնել չեն կարողացել և մօտենալ հասկանալու ընդունակութիւնը չեն ունեցել յետագայում—բալկանեան պատերազմի ժամանակ—և շնորհիւ այդ՝ յեղափոխական իմաստով՝ քաղաքական լայն գիտակցութեան բացակայութեան, թիւրքահայ դատը միշտ տարվել է սխալ շաւղով (թէ դիւանագիտական և թէ յեղափոխական ասպարէզում)։

Միւս կողմից պէտք է ի նկատի ունենալ այն, որ տարիներից ի վեր կովկասահայ ժողովուրդը զոհաբերել է իր նիւթականը, անձը և այլն՝ ոչ մի հասկացողութիւն չունենալով թիւրքահայ երկրի այն իրական պայմանների մասին, որոնց շնորհիւ կարելի կը լինէր ցանկացած նպատակին հասնել՝ թիւրքահայ ժողովրդին ազատագրված տեսնել։

Մանր բուրժուական նացիօնալիստ կուսակցութիւնը մթագնել է դասակարգային գիտակցութիւնը հայ մասսաների, նրանց կերակրել է վերացական գաղափարներով ու ճռճռան ֆրազներով օդային պալատներ է կառուցել թիւրքահայ ժողովրդի համար։ Եւ եթէ այսօր որոշ բարենորոգումներ են տրվում թիւրքահայերին, դա ոչ մի կապ չունի այդ կուսակցութեան գործունէութեան հետ, և դրան ապացոյց կարող է ծառայել այն փաստը, որ վերջին պատգամաւորութիւնը՝ Նուպար-փաշայի նախագահութեամբ Եւրոպայում՝ հայ լիբերալների և հոգևորականութեան ներկայացուցիչն էր, և այդ կուսակցութիւնը, շնորհիւ իր սխալ դիւանագիտական գործելակերպի, չը կարողացաւ այդ դերը ստանձնել։

Ս. Բօղդանովիչ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Պոլիտեխնիկումը կառուցանող գըլխաւոր կօմիտէտի տեխնիքական յանձնաժողովը հրաւիրել է իր անդամներից մէկին, որը ինստիտուտի շինութեան յատակագիծը կազմողներից մէկն է, այն է՝ ինժեներ Հ. Տէր-Միքայէլեանին։ Նրա հետ կապած պայմանի համաձայն, պոլիտեխնիկումը իր բոլոր բաժիններով պէտք է աւարտվի 5 տարվայ ընթացքում. բայց գըլխաւոր շինութիւնը պէտք է վերջանայ 1917 թ. օգոստոսի 15-ին, ուսումնական տարվայ սկզբին։ Հ. Տէր-Միքայէլեան պէտք է այս տարվայ օգոստոսի 15-ին տեխնիքական յանձնաժողովին ներկայացնի գլխաւոր շինութեան մանրամասն գծագրութիւնը, որպէսզի կարելի լինի ժամանակին կոնկուրս յայտարարել շինութեան կենտրոնական վառարանի և օդամաքրութեան մասին։

◆ Յունիսի 17-ից արդէն սկսել են պոլիտեխնիկումի հիմք փորելու աշխատանքները։

◆ Ինչպէս յայտնի է, քաղաքային լոմբարդը տեղափոխվել է Մելիք-Ազարեանի Օլգինսկայա փողոցի և Վէրայի զառիվայրի անկիւնում գտնող նոր տունը։ Այդ մասին յայտարարութիւններ էին տրված տեղական, համարեա, բոլոր լրագիրներին։ Մեզ համար միանգամայն տարօրինակ է, որ քաղաքային հաստատութեան նման մի հիմնարկութիւն, որին շատ լաւ յայտնի է 40-ամեայ մի այնպիսի թերթի գոյութիւնը, ինչպիսին է «Մշակը», զլանում է տալ միևնոյն յայտարարութիւնը՝ զետեղել և նրա մէջ։ Մենք քանիցս հրաւիրել ենք քաղաքային վարչութեան ուշադրութիւնը այն աչքառու վերաբերմունքի վրա, որը արտայայտվել է անցեալում քաղաքային յայտարարութիւնների հարցում «Մշակի» նկատմամբ։ Ներկայ դէպքում այս նոր փաստը առիթ է տալիս մեզ մի անգամ ևս հրապարակօրէն բողոքելու։ Երևի լօմբարդի նոր դիրեկտօրը իր հասարակական գործունէութիւնը քաղաքային ինքնավարութեան մէջ սկսում է դէպի այս կամ այն հասարակական օրգանը անձնական համակրանքի կամ հակակրանքի նկատառումներով։ Կարծում ենք, որ հասարակական մի այդպիսի պատկառելի հիմնարկութեան մէջ խտրականութիւնը չը պէտք է տեղ ունենայ, ով էլ լինի նրա ղեկավարը։

◆ Նահանգապետը մի շրջաբերականով ուղարկել է ոստիկանապետին և գաւառապետներին ներքին գործերի մինիստրութեան կենտրոնական վիճակագրական կօմիտէտի շրջաբերականի պատճէնը, որը վերաբերում է երկրի ազգաբնակութեան մասին տեղեկութիւններ հաւաքելուն, որովհետև առաջիկայ 1915 թւի դեկտեմբերին կատարվելու է կայսրութեան մէջ եղած ազգաբնակութեան երկրորդ ցուցակագրութիւնը։ Նահանգապետը իր շրջաբերականում առաջարկում է գաւառապետներին և ոստիկանապետին ծանօթանալ մինիստրութեան յիշեալ շրջաբերականի բովանդակութեան հետ, ցուցակագրական թերթերի ձևի հետ և իրանց ստորադրեալներին բացատրել գործի կարևորութիւնը։

◆ Ոստիկանապետի կարգադրութեամբ թաղական հսկիչները պարբերաբար, բժիշկների հետ միասին, պէտք է դիտեն մրգավաճառների ապրանքները։ Անպէտք համարված մրգերը պէտք է ոչնչացվեն, իսկ նրանց տէրերը ենթարկվելու են պատասխանատուութեան։ Մրգերը, պարտադիր որոշումների համաձայն, ծածկված պիտի լինեն շղարշով։

◆ Քաղաքագլխի պաշտօնակատար Գ. Դ. Ժուրուլի, քաղ. վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէկեան դիտեցին նոր սպանդանոցը, սառցի գործի և այնտեղ նկատված անկանոնութիւնների դէմ միջոցներ ձեռք առնելու համար։

◆ Օտտօ Մաղէրի, Ֆրիդրիխ Վեացէլի, Դաւիթ Դիտրիխի և այլ մի քանի ուրիշների գարեջրագործարաններում բանւորները, տէրերի կողմից իրանց առաջադրած տնտեսական պահանջներին գոհացում չը ստանալով, դադարեցրին աշխատանքները և գործի չը գնացին։ Վեացէլի գործարանում աշխատում են օրավարձով մարդիկ։

◆ Գարեջրի գործարանների (ուր սառցի պահեստներ կան) բանւորների գործադուլի հետևանքով՝ սառցի գինը 30 կոպէկից բարձրացել է 60 կոպէկի։

◆ Աշխատանքները փոխարքայի դիւանատանը, ամառվայ պատճառով, այժմ կատարվում են առաւօտեան ժամը 9-ից մինչև ցեր. ժամը 3-ը։

◆ Այսօրվանից քաղաքային լոմբարդում (Մելիք-Ազարեանի շէնքում) սկսվելու են գործառնական աշխատանքները։

◆ Տղայոց 4-րդ գիմնազիան աւարտել են 20 հոգի։ Դրանցից երեքը ոսկէ մեդալով, իսկ երկուսը արծաթէ։

◆ Ուրբաթ, յունիսի 20-ին, երկրագործութեան դեպարտամենտի Կովկասի լիազօրի դիւանատանը կայանալու է Կայսեր. Ռուսաց Պտղաբուծական Ընկեր. Կովկասի ճիւղի անդամների ընդհանուր ժողովը մի շարք կարևոր հարցեր քննելու համար։ Նիստը բաց է, ամեն մարդ կարող է ներկայ գտնվել։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Մոսկվայի բնական գիտութիւնների տարածող ընկ. որոշել էր յունիսի 15-ին մի էքսկուրսիա կազմակերպել դէպի Կովկաս մասնաւորապէս Դաղստան, յիշեալ վայրը գիտնականօրէն ուսումնասիրելու համար։ Էքսկուրսիան պէտք է ծանօթանար տեղական բնութեան, ազգաբնակութեան, յուշարձանների և այլ հնութիւնների հետ։ Սակայն էքսկուրսիային մասնակցողներից շատերը հրաժարվեցին՝ ի նկատի ունենալով Բագուի շրջանում երևացած ժանտախտ հիւանդութիւնը։ Այդ պատճառով էլ ընկ. ստիպված եղաւ թողնել էքսկուրսիան եկող տարվան։ Այդ էքսկուրսիայի փոխարէն մի խումբ մարդիկ մօտ օրերս գալու են Կովկաս՝ ծանօթանալու յարմարութիւնների հետ, որ եկող տարվայ մեծ էքսկուրսիան դժուարութիւններ չը հանդիպէ։

◆ Ձկնարդիւնաբերող Լիանօզովի գործակատար Մ. Սահարբէկեան «Каспій» լրագրում հերքում է այն տեղեկութիւնը, որ իբր թէ սենատոր Ե. Ա. Վատացին Լիանօզովի ընդհանուր կառավարիչ է նշանակվում։

◆ Կախէթի երկաթուղագիծը ներկայումս հասցված է մինչև Կարդանախի գիւղը, որտեղից շարունակվելու է դէպի Ցնօրիս-Ծղալի պօստային կայարանը։ Այստեղից սկսվում է միջ-կովկասեան երկաթուղին։ Գծի այս ճիւղը աւարտվելով՝ կը հեշտանայ երկաթուղագծի նիւթերը տեղափոխելու գործը։ Հարաւային ճիւղը աւարտելուց յետոյ, գիծը Գուրջաանի գիւղից շարունակվելու է դէպի Թէլաւ։

◆ Քաղաքային գործերի նահանգական վարչութիւնը յունիսի 13-ին որոշեց հաստատել Դուշէթ և Սղնախ քաղաքների 1914 թւի նախահաշիւները աննշան փոփոխութիւններով։

◆ Յունիսի 12-ին և 13-ին Սօղանլուղ գիւղի մօտերքը գտնվել են երեք ջրահեղձների դիակներ։ Դրանցից մէկն է՝ վարժուհի Մարիա Մեխիեվայի (28 տարեկան) դիակը, երկրորդը՝ պօստի պաշտօնեայ Իվան Եակուբովիչի, իսկ երրորդը՝ ակցիզային պաշտօնեայ Տուգոլնինի որդի Իվանի (10 տարեկան)։

◆ Երկրագործութեան դեպարտամենտի պտղաբուծութեան մասնագէտ Կրիշտոֆովիչ առաջիկայ սեպտեմբերի 1—15-ը Գորու գաւառի զանազան վայրերում բնակիչներին ծանօթացնելու է պտուղներ չորացնելու ձևի հետ և մի շարք դասախօսութիւններ է կարդալու։

◆ Այս վերջին յորդ անձրևից առաջացած հեղեղը մեծ վնասներ է հասցրել Բորչալուի գաւառի բնակիչներին։ Ջանախչի գետը վարարելով 88—105 վերստ քանդել է Թիֆլիս-Ալէքսանդրոպոլեան խճուղին, գետին է տապալել հեռագրասիւները, այնպէս որ հեռագրաթելերը կտրված են, դրանց հետ միաժամանակ քշել տարել է և Սաֆարլօ գիւղի մօտ եղած կամուրջը և ջրաղացը, որը պատկանում էր Սաֆարլօյի գիւղացիներին։

◆ Պետերբուրգի պետ. բանկում հարց է բարձրացված բանկի բաժանմունքները աւելացնելու մասին։ Առաջին հերթին ճիւղերը բացվելու են Հիւսիսային Կովկասում և Անդրկովկասում։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ժող. լուս. մինիստր Կասսօն առաջարկեց ուսումնարանական հաստատութիւններին ձեռք բերել դասագրքերը միմիայն ժող. լուս. մինիստրութեան ուսումնական կօմիտէտի թոյլտուութեամբ։ Ուրիշ դասագրքեր գործածելու համար պաշտօնանկ կը լինեն ուսուցիչները, տեսուչները և վերատեսուչները։

◆ Արդարադատութեան մինիստրութեան մէջ որոշված է պահանջել Իտալիայից յանձնել պրոֆ. Մերէժկօվսկիին։

◆ Բուրցէվը մի գրութիւն է ուղարկել Պարիզից արդարադատութեան մինիստրի անունով, որի մէջ առաջարկում է դատել Ազէֆին՝ իբրև զինւորական կազմակերպութեան պարագլխի, որ կազմակերպել է 30 տէրրօրիստական ակտ, օգտվելով ոստիկանութեան դեպարտամենտի տեղեկութիւններից։

◆ Պետերբուրգում ոստիկանութիւնը ձերբակալել է մեծ թւով բանւորների, որոնք ժողովվել էին փողոցում միտինգի՝ դատապարտված փաստաբաններին համակրանք արտայայտելու համար։

◆ Օդերեւոյթաբանական դիտարանի տեղեկութիւնների համաձայն, առաջիկայում սարսափելի հեղեղներ են սպասվում Խարկովի նահանգում։

◆ Թոյլատրված է կայացնել Պետերբուրգում գրողների երրորդ համառուսական համագումարը։

◆ Ներկայումս արդարադատութեան մինիստրութեան մէջ քննվում է օտարազգի իրաւաբաններին քրէական գործեր պաշտպանելու իրաւունք տալու օրինագիծը։ Խնդիրը նրանումն է, որ ռուսաց օրէնսգրքում այդ մասին ոչինչ որոշակի բան ասված չէ։ Դժուարութիւնը կայանում է միայն նրանում, որ որքան դիւրին է տեղեկութիւններ ժողովել ռուս իրաւագէտների մասին բարեյուսութեան տեսակէտից, այնքան այդ հնարաւոր չէ օտարազգիների վերաբերութեամբ։

◆ «Н. Вр.»-ի ասելով Պավլօսկում պաղպաղակից թունաւորվել են մօտ 200 հոգի, որոնց բարեբաղդաբար փրկել են շուտով բժշկական օգնութիւն հասցնելով դեղատներում։

◆ Սենատոր Շուլգինը հարցաքննեց պատգամաւոր Չխէիձէին, բայց վերջինս բացատրութիւններ տալուց հրաժարվեց, յայտնելով որ ինքն իրան մեղաւոր չէ ճանաչում և որ իրան դատի ենթարկելը ապօրինութիւն է, որովհետև այդ բանը խախտում է հիմնական օրէնքների 14-րդ յօդուածը։

◆ Այս օրերս Պետական Դումայի նախագահ Ռօձեանկօն Պետերհօֆում մի զեկուցում կը տայ Պետ. Դումայի աշխատանքների մասին։

◆ Պետերբուրգում բացվեց մուսուլմանական համագումարը։ Մասնակցում են 20 հոգի պատգամաւորներ։ Նախագահ է ընտրված Տեվկելեվ, օգնականներ Ախտեարօվ և Թօփչիբաշեվ, քարտուղարներ՝ Բաղեեվ և Մաքսուդօվ։ Խօսակցութիւնները լինելու են մայրենի լեզուով։ Նախագահը յայտնեց ժուռնալիստներին համագումարն արգելելու մասին։ Պատգամաւոր Ջաֆարօվ մի զեկուցում կարդաց Անդրկովկասի թուրքերի դրութեան մասին։ Ջաֆարօվը իր զեկուցման մէջ յայտնեց, որ ժողովրդի հոգեկան կեանքը հարկ չէ զգում իշխանութեան միջամտութեան և որ անզգոյշ քայլերը զայրոյթ և գրգռումն կառաջացնեն, որովհետև դրա համար բաւական է յիշել Երմօլօվի ժամանակները և միւրիդիզմը։

◆ Կիեվում քննվեց Ստոլիպինին սպանող Բօգրօվի դահիճ Շկօտայի գողութեան գործը։ Փաստաբանները հրաժարվեցին նրան պաշտպանելուց։ Այն ժամանակ հանդէս եկաւ դատարանի կողմից նշանակված փաստաբանը։ Շկօտան արտասուքն աչքերին խնդրեց, որ ներողամիտ լինեն դէպի ինքը, և պատմեց, որ Բօգրօվին կախելուց յետոյ ամենքն իրան արհամարհանքով են վերաբերվում, անգամ յանցագործները, որ կինը հեռացել է իրանից, իսկ գիւղացիները վճռել են աքսորել գիւղից։ Երդուեալները մեղադրական վճիռ արձակեցին։ Մեղադրեալը դատապարտվեց 8 ամսվայ բանտարկելութեան։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Գերմանական նոր գրականութեան պատմութիւն» (Համառօտ ակնարկով սկզբնական շրջանի մասին), Գ. Ալթունեանի, 1914 թ., Վաղարշապատ, 275 էջ։

I

Հայ գրական ասպարէզում տակաւին ոչ մի սիստեմատիկ աշխատութիւն չը կայ, որ նուիրված լինի եւրոպական այս կամ այն ժողովրդի գրականութեան ամբողջական պատմութեան։ Այդ տեսակէտից միմիայն հայերէնով գոհացող ընթերցողը շատ քիչ բան կը գտնի կամ համարեա ոչինչ չի գտնի եւրոպական գրականութեան պատմութեան մասին, որով նա կարողանար մի ամբողջական գաղափար կազմել այս կամ այն ժողովրդի գրական ստեղծագործութեան և նրա մտաւոր զարգացման մասին։

Գ. Ալթունեանը, կարելի է ասել, առաջինն է, որ այդպիսի փորձ է անում մեր մէջ կազմելով «Գերմանական գրականութեան պատմութիւնը», գլխաւորապէս նրա նորագոյն շրջանը։ Ալթունեանը, կազմելու համար իր ներկայ աշխատասիրութիւնը, օգտվել է, իր ասելով, գերմանական աղբիւրներից և, նոյնպէս իր ասելով, «առանձին ստեղծագործական աշխատանք գործ չէ դրել»։ Նշանակում է, կազմողը սոսկ մի կօմպիլեացիա է կատարել. վերցրել է իր գրքի համար այն, ինչ որ գերմանական դասագրքերի ու ուսումնասիրութիւնների մէջ յարմար է գտել իր տեսակէտով, առանց ունենալու իր որոշ տեսակէտը, ղեկավարող սկզբունքը։

Բայց մի՞թէ կարելի է այդ ձևով մի հարուստ գրականութեան պատմութիւն ներկայացնել. մի՞թէ կարելի է այդպիսի մի չափազանց պատասխանատու գործի համար միմիայն կցկտուր «բանքաղով» բաւականանալ և վերջն էլ գրքի ճակատին դնել «Գերմանական գրականութեան պատմութիւն» մեծադղորդ խորագիրը։ Մեզանում անվերապահ, անպատասխանատու ձևով շատ բաներ են ասում ու բարձր որակումներ անում իրանց աշխատութիւնների նկատմամբ. և Ալթունեանի արածը նորութիւն չէ. սակայն պիտի մի անգամ ընդմիշտ իմանալ, որ նման երևոյթները փայլուն ապացոյցներ են այդպիսիների մտաւոր սակաւապէտութեան...

Ալթունեանի կազմած գիրքը ոչ թէ գերմանական գրականութեան պատմութիւն է, այլ այդ պատմութեան վերաբերեալ գերմանացի քննադատի կամ պատմածի այս կամ այն կարծիքների մի ծանծաղ ժողովածու. կազմողը գոնէ պիտի համեստութիւն ունենար գրքի ճակատին ոչ թէ «գրականութեան պատմութիւն» որակումը դնելու, այլ գոնէ՝ «Գծեր գերմանական գրականութեան պատմութիւնից» կամ նման մի վերնագիր։

Նկատելի է մի հանգամանք. Ալթունեանը աղբիւրների ցանկի մէջ բազմաթիւ գերմանական և ռուսական աշխատութիւնների անուններ է դրել. աշխատութիւններից մեծ մասը սատար գործեր են։ Նշանակում է՝ կազմողը ձեռքի տակ մեծ նիւթ է ունեցել, բայց շատ վատ (որակով) գործ է տուել։ Պատճա՞ռը։ Պարզ է, որ կազմողին պակասել է ներկայ գործի համար ամենագլխաւոր բանը. դա սեփական տեսակէտի, սեփական ղեկավար սկզբունքի կատարեալ բացակայութիւնն է։ Ըստ որում և նա չէ կարողացել օգտվել ըստ հարկին այն աղբիւրներից, որոնք սեփական տեսակէտի զարգացման գործում կարող էին կազմողին առատ նիւթ մատակարարել։

Ուստի մենք խօսելով Ալթունեանի «Գերմանական գրականութեան պատմութիւն» գրքի մասին, ներկայ դէպքում պիտի քննադատենք ամենից առաջ հէնց այդ տեսակէտի, ղեկավար սկզբունքի լիակատար բացակայութեան փաստը։

Ընդհանուր ակնարկ անելով գերմանական լեզուի ծագման մասին, կազմողը անմիջապէս անցնում է հնագոյն շրջանին և գրքի 7 էջերով հասնում XVIII դարին։ Ներկայ պարագայում խնդիրը համառօտութեան մէջ չէ, այլ այն ծանծաղամիտ բնորոշումների, որոնք տրվում են գերմանական գրականութեան այս կամ այն պատմական շրջանի նկատմամբ։ XII դարից մինչև XIV դարը գերմանական գրականութեան մէջ տիրող երևոյթը ասպետականութիւնն է, և դա ըստ կազմողի, իբր թէ արդիւնք է այն բանի, որ «ասպետները XII դարի վերջերից բռնում են հոգևորականների տեղը, որոնք և այժմ դառնում են հոգևոր կեանքի առաջնորդներ»։ Այստեղ ակնյայտնի կերպով նկատելի է մի այլ անհրաժեշտ պայմանի բացակայութիւն։ Մի ժողովրդի գրականութեան պատմութիւնը գրելու համար պէտք է իմանալ այդ ժողովրդի հասարակական կեանքի ամբողջ պատմութիւնը։ Եւրոպական որևէ ժողովրդի, ներկայ դէպքում գերմանականի, գրական պատմութիւնը գրելու կամ կազմելու համար պէտք է իմանալ ոչ միայն յիշեալ ժողովրդի պատմութիւնը, այլ ամբողջ Արևմտեան Եւրոպայի։

Ալթունեանը, դժբաղդաբար, պատմական երևոյթների գենեզիսի, ծագման խնդրում չափազանց անճար է երևում, թէև պարոնը էջմիածնի պաշտօնական օրգան «Արարատում» քիչ չէ գրել պատմութեան մասին, մանաւանդ քիչ չէ «պարսաւել» ու «ոչնչացրել» մարքսիստական պատմահայեցողութիւնը կամ մատերիալիստական պատմական ըմբռնողութիւնը։ Դուրս է գալիս ներկայ դէպքում, որ ասպետները միջնադարեան իւրատեսակ կրօնաւորներ են եղել, հոգևորականներին փոխարինող, որ «այժմ դառնում են հոգևոր կեանքի առաջնորդներ»։ Կարդալով «գրականագէտ»-«պատմագէտ» Ալթունեանի տողերը, մարդ կարող է կարծել, որ ասպետները ծնվել ու մեծացել են միջնադարեան վանքերում և հարազատ զաւակներ են հոգևորականների։ Պարզ է, որ այս դէպքում ասպետականութիւնը բնորոշելու համար Ալթունեանը մոռացել է ամենագլխաւոր փաստը՝ աւատականութիւնը. այլ խօսքով, ընկել է այն աշակերտի դրութեան մէջ, որին երկու առանձին թւեր գումարելու համար պակասում է միայն մի «փոքրիկ» բան՝ իմանալ գումարման գործողութիւնը... Ապա, մի շարք այլ անհեթեթութիւններ ասելուց յետոյ, Ալթունեանը բնորոշում է ասպետական գրականութեան անկման պատճառները։ Ինչո՞ւ է ընկել այդ գրականութիւնը. որովհետև «ասպետականութիւնը խաչակիր արշաւանքների մէջ ի կատար ածելով իր էական նպատակները, բարոյական և մտաւոր այլասերման է հասնում» (?!). և ապա՝ որովհետև «Հօհենշտաուֆեան դինաստիայի անկումից յետոյ յաջորդ կայսրների պալատներն այլ ևս կենտրոն չեն հանդիսանում գրական և բանաստեղծական կեանքի»,— շեշտում է Ալթունեանը։ Գերմանական «գրականութեան պատմութիւնը» գրող պարոնը գերմանական իրականութեան թանգարանում (кунсткамера) տեսել է ամեն բան, բայց չէ նկատել փղին. յիշել է «յաջորդ կայսրների պալատների» «կենտրոն» չը լինելը, բայց մոռացել է աւատական կարգերի մէջ եղած հիմնական փոփոխութիւնները, որոնք և ամենագլխաւոր պատճառներն էին ասպետականութեան և նրա գրականութեան անկման։

Եւ ահա այս բնորոշումներից յետոյ Ալթունեանը անցնում է XVIII և յաջորդ դարերին, այն է՝ իր իսկական նիւթին։ Նա այստեղ թւակոխում է իսկապէս մի շրջան, երբ կեղծ կլասիքների և գեղարւեստական ռէալիզմի կողմնակիցների միջև մի զօրեղ պայքար էր առաջ եկել։ Բայց ինչպէս է բնորոշում այդ երևոյթը «գերմանական գրականութեան պատմութիւնը» գրող Ալթունեանը և ինչպէս է բացատրում այդ նշանաւոր երևոյթի ծագման պատճառները, ահա այդ է գլխաւորը։ Երբ խօսվում է այդ երկու հակառնեաների պայքարի մասին, բնականաբար հարց է ծագում, թէ ո՞րտեղ էին թագնված դրանց իսկական աղբիւրները։ Եթէ կեղծ-կլասիք Գօտշէդը, իսկ յետագայում Կլօպշտօքն ու Վիլանդը իրանց հայեցքը ուղղել էին դէպի ֆրանսիական կլասիցիզմը, իսկ Բօդմէրը կամ Լէսսինգն ու Հերդէրը՝ դէպի Անգլիան, ապա Ալթունեանը պարտաւոր էր ցոյց տալ այդ երևոյթի պատճառները։ Ինչո՞ւ էր զարգացել կեղծ-կլասիքականութիւնը Գերմանիայում, ինչո՞ւ էր ապա նա դիմում դէպի անկում և նրա փոխարէն առաջ գալիս գրական մի նոր հոսանք։ Ալթունեանին պիտի պարզ լինի մի հանգամանք, որ գրականութիւնը ինքնապարփակ երևոյթ չէ. նա գրողների անձնական ցանկութիւնների ու քմահաճոյքների արգասիք չէ. նա ունի հասարակական խոր պատճառներ։ Եթէ այդպէս է, ուրեմն կարելի է ցոյց տալ դրա հիմնական պատճառը։ Սուրխաթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 18 յունիսի

Հայոց Դրամատիկական Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովի որոշմամբ տեղի ունենալիք միջնորդ դատարանի համար, որ ստուգելու է իմ պատճառաբանեալ գրաւոր հրաժարականի մէջ թւած պ. Գ. Երիցեանի արարքները, իմ կողմից յայտարարում եմ դատաւորներ՝ պ. պ. Ռուբէն Յովհաննիսեանին և Սարգիս Խարազեանին։

Ա. Նազարէթեան

Ղազվին, 5 յունիսի

Ի պատասխան «Մշակի» № № 38-ի և 86-ի մէջ տպված մեր այն տեղեկութեան, թէ Ղազվինում մի հայ բռնագրաւել է շահնշահներից հայ ազգին եկեղեցի և դպրոց շինելու համար նուիրված մօտ 5000 գազ մեծարժէք հողաբաժինը, հոգաբարձութեան երեք անդամներ—Աւագ Յարութիւնեան, Առ. Գրիգորեան և Սմբատ Աստուրեան—«Մշակի» № 109-ում գրում են.

«Որովհետև հոգաբարձութեան ձեռքի տակ չը կայ որևէ դօկումենտ, որ ապացուցանէ մի այդպիսի խնդիր, ուստի հոգաբարձութիւնս խնդրում է պ. յօդուածագրից յանձնել մարմնիս այդ դօկումենտները, որպէս զի հնարաւորութիւն ունենանք ճշդելու այդ հարցը»... և այլն։

Վերոյիշեալ տողերը գրող հոգաբարձութեան անդամներին շատ լաւ յայտնի է, որ Ղազվինում ամեն ոք գիտէ, թէ հէնց այդ նոյն հոգաբարձուներն են ժողովրդի մէջ տարածել այդ բռնագրաւման մանրամասնութիւնները, նրանք են մատնանշել և ցոյց տուել այդ դօկումենտները և այսօր էլ նրանց ձեռքին են գտնվում այդ նոյն հարցին վերաբերող բոլոր թղթերը, արձանագրութիւնները, կօպիաները և այլն։

Բայց որպէս զի ձևականութիւնը պահպանած լինենք, տալիս ենք հոգաբարձու պարոններին նրանց՝ մեզանից աւելի լաւ իմացած փաստերից մի քանիսը.

1) Հոգաբարձութեան արխիվում մենք նոյն հոգաբարձութեան իսկ ցուցումով գտել ենք բազմաթիւ դօկումենտներ, որոնք ապացուցանում են իբր թէ իրան հոգաբարձութեանն անյայտ այդպիսի մի խնդիր։

2) Հոգաբարձութեանը քաջ յայտնի է Գիլանի պաշտօնական բանակցութիւնները այդ մասին, որ մեզ հաղորդել է նոյն հոգաբարձութեան մի անդամը։

3) Հոգաբարձութեան նախագահն է ասել. «Երանի մէկը լինի այդ բռնագրաւումը ետ բերող, մենք պատրաստ ենք ապացուցանելու անհերքելի փաստերով»։ Նոյնը կրկնեց նա երկու օր առաջ, «Մշակի» մէջ իրանց հարցականը տպելուց յետոյ շատերի ներկայութեամբ։

4) «Նոր-Ջուղայի Լրաբեր» թերթի մէջ 1905 թ. տպված հաղորդագրութիւնը, որի մասին լսել ենք հէնց նոյն հոգաբարձութիւնից։

5) Շահնշահի ֆէրմանը, որ գտնվում է Նոր-Ջուղայում։

6) Ներքին գործերի մինիստրի հաստատութիւնը։

7) Ղազվինի այն ժամանակվայ դատաւոր Մուլքարայի հաստատութիւնը և կալուածքի յանձնումը։

8) Այն գախօները (էկսպերտները), որոնք հաստատել են այդտեղի յանձնումը ազգին։

9) Նոյն բռնագրաւող պարոնի ստորագրութիւնը մի հեռագրի, տրված ներքին գործերի մինիստրութեան, որով շնորհակալութիւն է յայտնվում ազգի կողմից՝ տրված կալուածքի համար։

10) Ամեն մի հայ, որ Ղազվինումն է եղել այդ ժամանակ։

Այո, շատերն են խոստովանում, շատերն են վկայում, իրանց բողոքն ու զայրոյթը յայտնում, բայց բռնագրաւողների զօրաւոր քարութիւնից վախենում են հրապարակապէս ճշմարտութիւնն ասել, ինչպէս և աններելիօրէն նոյնն անում է հոգաբարձութիւնը։ Մար.

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Հանգուցեալ Քալանթար Քալանթարեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն Ալ. Մելիք-Ազարեան նուիրել է Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան որբանոցին մի հարիւր ռուբլի։

—

Թիֆլիս, 16 յունիսի

Թէլէթ գիւղի ծխ. երկսեռ դպրոցի օգտին ստացվեց քաղաքային վարկի ընկերութիւնից 75 ռ.։ Դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է իր լիաբերան շնորհակալութիւնը սոյն նուիրաբերութեան համար։

Նախագահ հոգաբարձութեան՝
Սարգիս ա.-ք. Շիոյեանց

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Ուստր, 12 յունիս

Ամերիկահայ գաղթականութեան մէջ ընդամենը հինգ ազգային եկեղեցի կար ասկէ առաջ, ասոր վրայ հատ մըն ալ աւելցաւ վերջերս, Փրօվիդէնսի հայ գաղութին ջանքերովը։

Ամսոյս 7-ին, Հոգեգալստեան կիրակին, տեղի ունեցաւ հանդիսաւոր օծումը Փրօվիդէնսի հայ եկեղեցիին, հազարի մօտ հասնող երկսեռ բազմութեան մը ներկայութեամբ։ Փրօվիդէնս քաղաքը այդ օր հայութեան համար ուխտատեղի դարձած էր։ Շրջակայ գիւղերէն ու քաղաքներէն անհամար բազմութիւն մը հաւաքուած էր, հանդիսատես լինելու օրուան հանդէսին։

Եկեղեցւոյ օծումը կատարեց Բօսթօնի թեմակալ հովիւ՝ Մուշեղ արքեպիսկոպոս Սերոբեան, իր հետ ունենալով Շահէ ծ. վ. Գասպարեան, Վաղարշակ վ. Արշակունի (հովիւ Փրօվիդէնսի) և Ներշապուհ քահանան։ Ամերիկահայոց առաջնորդը չը կրցաւ ներկայ գտնուիլ շաբաթներ առաջ Կալիֆօրնիա մեկնած ըլլալով։ Հանդէսը տևեց մօտաւորապէս 7 ժամ, որուն մեծ համբերատարութեամբ սպասեց ժողովուրդը։ Եկեղեցին անուանուեցաւ ս. Թարգմանչաց ի յիշատակ համազգային մեծ տօնին։

Օրուան պատարագիչ Մուշեղ սրբազան խօսեցաւ իր հմտալից և ներշնչող քարոզներէն մէկը, բացատրելով հայ ազգ. եկեղեցիին դերը հայ կեանքի յաւերժացումին մէջ, ցոյց տալով որ հայ եկեղեցին միայն պիտի կրնայ հայ պահել հոս գաղթող հայութիւնը և հոս ծնած ապագայ հայ սերունդը։ Այս առիթով հանգանակութիւն մը բացուեցաւ, որմէ գոյացաւ 2000 ռուբլիի գումար մը։

Եկեղեցին փառաւոր և ընդարձակ է, իր մէջ ունի խոշոր ժողովասրահ։ Գնուած է 20,000 ռուբլիի։

Պրովիդէնսի հայ գաղութը ողջունելի է իր ցոյց տուած նախանձախնդրութեան համար հանդէպ սեփական եկեղեցի ունենալու ազնիւ գաղափարին։ Ողջունելի և միանգամայն շնորհաւորելի են գործին նախաձեռնարկ եղող ազգայինները։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՓԵՐԻՑ

—

Ուրմիա, 6 յունիսի

Առանց վրդովմունքի, առանց տխրելու անկարելի է գրել, խօսել այն սոսկ անտարբերութեան մասին, որը ցոյց է տալիս ուրմիացի հայը դէպի իր դպրոցական գործը։

Ամբողջ ուսումն. տարին անցաւ և ոչ մի ծնող չը բարեհաճեց գալ դպրոց և հետաքրքրվել, թէ ինչ է կատարվում այնտեղ, թէ իր զաւակը ինչպէս է սովորում, ինչ է անում։ Եկաւ ակտի օրը, երբ հասարակութիւնը պիտի գար իմանալու, թէ ինչ արդիւնք է տուել իր զաւակները վստահացած դպրոցը. ուր է գնացել իր տուած մօտ 4000 ռ. բիւջէն. նա պիտի լսէր նաև թէ ինչ պակասութիւններ ունի դպրոցը. բայց այդ օրն էլ հասարակութիւնը չէր բարեհաճել գալ։ Չէին եկել նոյնիսկ տեղումս գտնվող, կրթված համարվող անձնաւորութիւնները, որոնցից շատ բան է կախված այսպիսի վայրերում։

Բանը նրանում է, որ ո՛չ մի տարի Ուրմիայի մասին, գլխաւորապէս նրա կրթական գործի մասին չի ասվել, չի խօսվել, ինչքան այս տարի, ո՛չ մի տարի լրագիրներում այնքան չի գրվել՝ ինչքան այս տարի. բացի դրանցից, Կաթողիկոսից օրհնութեան կոնդակ, շնորհաւորական հեռագիր, նամակ և այլն. բայց դժբաղդաբար այդ ամենը չեն համապատասխանում իրականութեան։ Չի կարելի ասել, որ Ուրմիայում չի կարելի գործ կատարել. դա կը լինի բոլորովին սխալ։ Այստեղ պէտք է նուիրված գործող, նախաձեռնութեան ոգի, և կը տեսնէք, թէ կարճ ժամանակում ինչքան մեծ առաջադիմութիւն կանէ տեղիս հայ գաղութը։ Բայց գործիչներ, ազգային-հասարակական գործը սիրողներ չը կան այստեղ։ Բաւական չէ իր սեփական հաշիւներով կլանվելը, պէտք է նաև ժողովրդական օգտակարութիւն ցոյց տալ։ Հ. Ժամկոչ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՑ ՖԵՐԴԻՆԱՆԴ

Ինչպէս արդէն յայտնի է հեռագիրներից, սրանից մի երեք օր առաջ Սարաէվօյում մի գիմնազիստի արձակած գնդակներից վիրաւորվեցին և շուտով վախճանվեցին աւստրիական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդը իր կնոջ հետ միասին։

Աւստրիական արքիդուքս Ֆրանց Ֆերդինանդը է արքիդուքս Կարլ Լիւդվիգի (1833—96, եղբայր Ֆրանց-Յովսէփ կայսրի) աւագ որդին. Ֆրանց Ֆերդինանդը ծնվել է 1863 թւին։ Նա ժառանգել էր նշանաւոր կարողութիւն. 1896 թւին հօր մահից յետոյ, նա դարձաւ աւստրօ-ունգարական գահի ժառանգը։ 1892 թւին նա շուրջաշխարհային մեծ ճանապարհորդութիւն կատարեց, որի նկարագրութիւնը հրատարակեց 1895—96 թ. թ.։ 1898 թւին նա նշանակվեց կայսեր փոխանորդ զօրքի հրամանատարութեան գործում։ 1900 թւին նա ամուսնացաւ մօրգանատիքական պսակով, այսինքն ամուսնացաւ անտոհմ, հասարակ ծագում ունեցող մի աղջկայ հետ, որի անունն էր Սօֆի (ծնվել է 1868 թ.)։ Ամուսնանալով նա ստացաւ իշխանուհի Գօգենբերգ տիտղոսը։ Ամուսնութիւնից առաջ, որ տեղի ունեցաւ կայսեր համաձայնութեամբ, Ֆրանց Ֆերդինանդը պէտք է հանդիսաւորապէս հրաժարվէր իր ապագայ երեխաների գահաժառանգ լինելու իրաւունքից։ Այդ մասին եղած տեղեկութիւնը և համապատասխան օրինագիծը աւստրիական ռէյխսրատում ընդունվեց բաւական հանգիստ կերպով, միայն երիտասարդ չեխերը օգտվեցին առիթից, որպէսզի երկրորդ անգամ պահանջեն բօհեմական թագը բաժանել աւստրիականից։ Ունգարական ռէյխսրատում ընդդիմադիրները աղմուկ բարձրացրին. նրանք պնդում էին, որ ունգարական օրէնքները մօրգանատիքական ամուսնութիւններ չեն ճանաչում, հետևաբար Ֆրանց Ֆերդինանդի ամուսնութիւնը պէտք է միանգամայն օրինական համարել։ Վերջ ի վերջոյ, աղմկալից վիճաբանութիւններից յետոյ, ընդունվեց այդ բանը։ 1901 թ. Ֆրանց Ֆերդինանդը իր խնամակալութեան ներքոյ առաւ «կաթօլիկական դպրոցական միութիւնը», ըստ որում և մի ճառ արտասանեց, որի մէջ իր համակրութիւնը յայտնեց դէպի միութեան կղերական ձգտումները։ Այդ ճառը ուժեղ զայրոյթ առաջացրեց Աւստրիայի ոչ-կղերական մամուլի մէջ։ 1902 թ. Ֆրանց Ֆերդինանդը ընտրվելով Պրագայի ակադեմիայի նախագահ և ստանալով նոր ընտրված պատուաւոր անդամների ցուցակը՝ նրանից ջնջեց Լեվ Տօլստոյի անունը։ Ընդհանրապէս նա համարվում էր ծայրայեղ կղերական, և ոչ էլ այնքան հակված դէպի սահմանադրական կարգերը։

ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԷՆ

Քաղաքական հորիզոնը մթագնած

Կ. Պոլիս, 5 յունիս

Թիւրք և հելլէն վէճը իր սաստկագոյն օրերու մէջն է։ Այս վէճը կրնա՞յ պատերազմի փոխուիլ։ Ահա հարցում մը, որուն պատասխանին կը սպասէ բովանդակ աշխարհ։

Սակայն ինչ որ անհերքելի է, ինչ որ անժխտելի է, սա է, թէ Արևելքի մէջ դարձեալ տագնապ մը կը պատրաստուի։

Արդէն շատոնց գիտէք, թէ յունաց դէմ ինչ սարսափելի միջոցներ ձեռք առած են Թիւրքերը, զանոնք հարկադրելու համար, որ գաղթեն։ Թիւրքիան մաքրել յոյներէն։ Ահա նշանաբանը, որուն հետամուտ եղան Թիւրքերը, պատերազմէն յետոյ։

Եւ անոր անմիջական հետևանքը եղան յունաց պատրիարքարանին բուռն բողոքները և ցոյցեր, որոնց ամենէն գլխաւորն էր յոյն եկեղեցիներուն և դպրոցներուն փակումը, որ երկու շաբաթ կըլլայ։

Յունաստան ևս օգտուեցաւ այս նպաստաւոր առիթէն՝ վերջ տալու համար կղզիներու առկախ մնացած խնդրոյն, որ Թիւրքերը ի նպաստ իրենց լուծել կը յուսային՝ գնելով մի քանի դրէդնօուտներ և ապահովելով իրենց ծովու վրայ գերակշռութիւն մը։

Յունաստան՝ ինքզինքը չենթարկելու համար այն վտանգին, որ Թիւրքերու գերակշռութեան անմիջական հետևանքը պիտի ըլլար, կը սպասուէր, որ հարկադրէր Թիւրքերը ժամ առաջ կղզիներու խնդիրը կարգադրելու և կամ պատերազմ հռչակէր, դրէդնօուտներու յանձնումը արգիլելու համար։

Այդ առիթը Թիւրքերը տուին՝ յոյները խոշտանգելով ու հարստահարելով։

Յունաստան իր շահախնդրական տեսակէտներուն տեղ դրաւ անշահախնդիր զգացումներ, մարդասիրական պարտականութիւններ և, իբր թէ դրդուած այս վսեմ զգացումներէն, պահանջներ ներկայացուց Բ. Դրան՝ վերջ տալու համար յունաց դէմ ձեռք առնուած միջոցներուն։

Բ. Դուռը խոստացաւ ինչպէս յունաց պատրիարքարանին, նոյնպէս նաև հելլէն դեսպանին, սակայն այդ խոստումը կեղծ էր և պետական ծրագիրը կը գործադրուէր նոյն սաստկութեամբ։

Այվալըք՝ զուտ յունաբնակ քաղաքին վրայ գործուած յարձակումը, ջարդն ու հրդեհը աւելի արծարծեցին խնդիրը, և ասկէ հինգ օր առաջ Յունաստան, սքանչելիօրէն շահագործելով առիթը, ծանուցագիր մը ներկայացուց Բ. Դրան, որով կրկին կը յիշեցնէ իր Կ. Պոլսոյ դեսպանին միջոցաւ ըրած բերանացի դիտողութիւնները և Այվալըքի դէպքերն՝ Յունաստանի հանրային կարծիքին վրայ գործած մեծ ազդեցութիւնը, և յոյներու նկատմամբ գործադրուած միջոցներու հետևանօք անոնց գաղթականութեան պատճառած յուզումը Յունաստանի մէջ։ Ծանուցագիրը կը վերջանայ սա սպառնական բառերով.

«Կառավարութեանս հրամանով ամենայն խստութեամբ կը բողոքեմ ձեր բարձրութեան մօտ և պատիւ ունիմ յայտարարելու, որ արքայական կառավարութիւնը պատասխանատուութիւն չստանձներ այս տեսակ կացութեան մը ունենալիք հետևանքներուն համար, եթէ շուտով վերջ չդրուի և եթէ իշխանութիւնն ազդեցիկ աջակցութիւն մը չնուիրէ ձախորդութեան ենթարկուած յոյներուն, որպէսզի կարենան հոգալ իրենց անմիջական պէտքերը և վերստանալ իրենց գրաւուած ինչքերը»։

Այս ծանուցագիրը հիմա օրուան ամենակարևոր դէպքն է և պատերազմի ահազանգը։

Հակառակ անոր, որ Թիւրքերը գրգռեցին այս պատերազմը, որ ժպտադէմ ալ ընդունելու տրամադրութիւն մը ցոյց կուտային դեռ երէկ, և նոյնիսկ անոր կը պատրաստուէին իսկ, այսօր կարծես թէ վտանգի առջև կը զգան ինքզինքնին և կը վարանին։

Աւելի ճիշդ՝ լրջօրէն կը վախնան։

Այս շրջափոխութեան մէջ մեծ դեր ունենալ կը թուի Թիւրքիոյ լքումը Ռուսիայէն, Ռումանիայէն և նոյնիսկ Բուլղարիայէն, որուն վրայ մանաւանդ այնքան մեծ յոյսեր դրուած էին։

Հելլէն ծանուցագիրին, որուն պատասխանէն կախում ունի շատ բան, հակառակ ստիպողաբար պատասխան պահանջուած ըլլալուն և եւրոպական կառավարութիւններէ շուտով պատասխանել յանձնարարուած ըլլալուն, տակաւին չէ պատասխանուած։

Թիւրքիա՝ Յունաստանի պատասխանելէ առաջ՝ պետութեանց Կ. Պոլսոյ դեսպաններուն հաղորդեց ընդարձակ ծանուցագիր մը, որով յունաց գաղթականութիւնը արգիլելու համար ձեռք առնուած միջոցները պարզելով՝ կառաջարկէ տեսակ մը միջազգային քննութիւն, իրողութիւնները հաստատելու համար։ Ծանուցագիրը, սակայն, շատ նշանակելի է, որ չուրանար, թէ կարգ մը անտեղութիւններ պատահեցան, բայց զանոնք բնական հետևանքները կը համարէ քանի մը հազարաւոր անձերու շարժումին, որ հարկադրուեցան բալկանեան պետութեանց գրաւած երկիրներէն հեռանալ՝ Թիւրքիա գաղթելու համար, ուր հաստատուեցան։ Ասով հանդերձ խառնիւ կը հերքէ Յունաստանի կողմէ պետութեանց հաղորդուած տեղեկութիւնները։ Ծանուցագիրը յետոյ կառավարութեան՝ կացութեան դարման տանելու համար տուած աշխատութիւնները կը թուէ, և Թալէաթ-բէյի Ռումելիի և Անատոլուի մէջ կատարած ուղևորութիւնները կը յիշէ։ Օսմ. կառավարութիւնն ի վերջոյ կուզէ գիտնալ, թէ ասկէ աւելին կրնա՞ր ընել իր ժողովուրդներուն բարիքին համար։ Այսուհանդերձ Բ. Դուռը, ուզելով որ իր ըսածները հակակշռուին, կը պահանջէ, որ իւրաքանչիւր դեսպանատունէ մէկ-մէկ պատուիրակ Թալէաթ-բէյի ընկերանայ անոր ուղևորութեանը միջոցին։ Միւս կողմէ Թիւրքիա փափագ կը յայտնէ, որ իւրաքանչիւր դեսպանատան կողմէ ուրիշ պատուիրակներ ալ Մակեդոնիա զրկուին՝ իսլամներուն վիճակը քննելու և յետոյ կարենալ եզրակացնելու համար, թէ Թիւրքիա՞ն թէ ուրիշ մէկն է իրական յանցաւորը հանրային զայրոյթին ներկայացուած ծայրայեղութեանց մէջ։

Սակայն այս ծանուցագիր-շրջաբերականը չի կրնար ոևէ նշանակութիւն ունենալ բուն վէճին տեսակէտով։ Յունաստանի պատասխանը դեռ չէ տրուած, և այդ պատասխանէն է, որ կախում ունի Արևելքի կացութիւնը։

Այդ պատասխանին մասին կըսուի թէ բուռն անհամաձայնութիւն կայ դահլիճին մէջ, և ատոր համար է, որ Թալէաթ բէյ ստիպողաբար Կ. Պոլիս կոչուած է։ Դահլիճի փոփոխութեան զրոյցներ ալ կը շրջին, և որչափ որ կրցայ ստուգել՝ այս ամրակուռ և մշտատև կարծուած դահլիճը պիտի տապալի և խառն դահլիճ մը պիտի կազմուի, Վիէննայի դեսպան և նախկին վարչապետ Հիւսէյին Հիլմի փաշայի վարչապետութեամբ։ Նոյն իսկ շատ կը խօսուի, թէ Գաբ. Նորատունկեանի պիտի առաջարկուի արտաքին գործերու մինիստրութիւնը։

Հիւսէյին Հիլմի փաշա արդէն իսկ բանակցութիւններու սկսած է և Նորատունկեանի հետ դեռ երէկ մէկուկէս ժամէն աւելի՝ անոր բնակարանին մէջ՝ տեսնուած է։

Այս տագնապը առաջ եկած է ոչ թէ միայն Յունաստանի ծանուցագրին պատասխանելու մասին ծագած անհամաձայնութենէ մը, այլ աւելի խորունկ պատճառներէ, որոնց վրայ ալ կարժէ անդրադառնալ։

Ահա թէ ինչ կըսուի։

Յայտնի է, թէ արդի դահլիճին մէջ կը գտնուին երկու զինուորականներ, Էնվէր փաշա պատերազմական մինիստրի պաշտօնով և Ջէմալ բէյ՝ ծովային մինիստր։ Այս երկուքը դահլիճին գլխաւոր ոյժերը կը կազմեն։ Նազըմ փաշայի սպանութենէն և Քեամիլ փաշայի դահլիճին տապալումէն յետոյ, յայտնի է թէ Ջէմալ բէյ իբր կեդրոնի հրամանատար ինչ դեր կատարեց։

Գրեթէ ամենայն ինչ էր, երբ դեռ Էնվէր բէյ՝ միայն բանակին մէջ սահմանափակուած էր։ Ծայրայեղ միջոցներու համամիտ չըլլալով՝ Իզզէթ փաշա պատերազմական մինիստրութիւնը երբ ձգեց, Իթթիհադը բանակը մաքրելու գործը լրացնելու և բոլոր ընդդիմադիրները բանակէն դուրս նետելու գործը յանձնեց Էնվէր բէյի, որ պատերազմական մինիստր եղաւ փաշայութեան բարձրանալով։

Ասկէ զատ՝ փեսայանալով կայսերական ընտանիքին, դարձաւ անպարտելի ոյժ մը և հիմա տեսակ մը դիկտատորի դեր առած է։ Ջէմալ բէյ, բնական է թէ, շատ հաշտ աչքով չէ որ կը դիտէ իրեն դիրքը գրաւող այն անձը, որ շատոնց գլեց անցաւ և մոռացութեան մէջ ձգեց իր անունը։

Ասկէ առաջ եկած է իրարու դէմ ատելութիւն մը։ Էնվէր կը շարունակէ իր աններող քաղաքականութիւնը, կոտրել-թափելու ուղղութիւնը, որուն գլխաւոր մէկ արտայայտութիւնը կրնայ համարուիլ նոր զինուորական օրէնքը, որ Թիւրքիոյ պայմաններուն համապատասխան չէ։

Հետևաբար Էնվէր նկատուիլ սկսած է շատերու կողմէ վնասակար անձ մը, և իրեն դէմ Իթթիհադի շարքերուն մէջ իսկ ծանր դժգոհութիւններ կան։

Ջէմալ-բէյ, երբեմն այնքան կատաղի, նոյնքան ծայրայեղ, հիմա չափաւորներու հետ միացած է և, ասով, մրցակից դիկտատորը տապալելու կաշխատի։

Յունաստանի ծանուցագիրը այս ներքին ու լռելեայն մղուած պայքարը հիմա յայտնի կռիւի մը փոխած է։ Էնվէր փաշա կը պահանջէ, որ Յունաստանի ծանուցագրին ոևէ պատասխան չտրուելով նախատուի Յունաստան և ասով եթէ պատերազմի տեղ պիտի տրուի, տրուի։ Ընդհակառակը՝ Ջէմալ-բէյ կը պնդէ, թէ Թիւրքիա պէտք է խուսափի այս պատերազմէն, որ պարզ բաղդախնդրութիւն մըն է։ Ասկէ առաջ եկած է անհամաձայնութիւն մը, որ և մեծ համեմատութիւններ առած է։ Արդ, այս անելէն ելլելու և Էնվէրի դիկտատորութենէն ազատելու համար՝ կը մտածուի դահլիճը փոխել, և, երկրին տագնապալից վիճակը նկատի առնելով, երբ թէ կուզուի երկրին ճակատագիրը յանձնել խառն դահլիճի մը, որ կազմելու կաշխատի գաղջ ջուրերու անձ մը, որպէս է Հիւսէյին Հիլմի փաշա, որ Թիւրքիոյ արդի պետական անձերուն մէջ ամենէն կարողը և ձեռնհասը կը նկատուի այդ պաշտօնը ստանձնելու համար։

Տեսնենք թէ պիտի յաջողին այս ծրագիրը իրագործելու և երկիրը Էնվէրի դիկտատորութենէն փրկելու։

⁂

Մինչ այս մինչ այն, չմոռնանք ըսելու, թէ ռուս դեսպանատունէն ներշնչուած «Լա Թիւրքի» թերթը կը հաւաստէ, թէ ռուսաց դեսպանը նախաձեռնութիւն ստանձնած է Բ. Դրան և յունաց պատրիարքարանին միջև միջնորդութիւն մը կատարելու համար, որպէսզի պատրիարքարանը բանայ եկեղեցիներն ու վարժարանները։

Յունաց կրօնքի պատրիարքը իր որոշումը փոխելու համար ներկայացուցած է հետևեալ առաջարկները.

Ա) Գաղթող յոյները իրենց տուներուն մէջ վերահաստատել։

Բ) Վերադարձնել անոնց ինչքերը։

Գ) Վնասի հատուցում։

Դ) Բօյկօտի դադարում, բանտարկեալներու արձակում։

Ե) Երաշխաւորութիւններ։

Զ) Խառն յանձնաժողով մը կազմել, որ հսկէ գաղթողներուն վերստին բնակութիւն հաստատելու համար։

Այս առաջարկները արդէն ներկայացուած են Բ. Դրան։

Տէր-Երմանոս պատրիարք այս առթիւ որոշած էր օրթօդօքս ինքնագլուխ եկեղեցիներուն զրկել շրջաբերական կոնդակ մը, որով պիտի ծանուցանէր եկեղեցիներու և դպրոցներու փակումը և պիտի խնդրէր անոնց աջակցութիւնը։ Այս կոնդակը տակաւին չէ զրկուած, կերևայ թէ սպասելով Բ. Դրան պատասխանին։

Հայորդի

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Չերնոգորիայի և Սերբիայի միջև ունիա է ստորագրվել, որի հրատարակութիւնը պաշտօնապէս դեռ թոյլատրված չէ։

◆ Սօֆիայում վախճանվեց ատամը բժշկելիս արեան վարակում ստանալուց բուլղարական օպերայի հիմնադիր ու ռէժիսեօր, Կայսերական Մոսկովեան օպերայի նախկին արտիստ Միխայլով-Ստոեանը։

◆ Պրինց Վիդը ռումինական թագաւորի միջոցով օգնութիւն է խնդրում մեծ պետութիւններից։ Հակառակ դէպքում պրինցը հրաժարվելու է գահից։ Ռումինական թագաւորը պատուիրեց իր դեսպաններին պաշտպանել պրինցի միջնորդութիւնը։

◆ Թիւրքիան ձեռք է բերում 52 օդանաւ։

◆ Էնզէլիից հեռագրում են, որ տեղական հիւպատոսական գործակալին աջողվեց ձերբակալել կօզակների օգնութեամբ այն 7 վրացիներին, որոնք, Էնզէլիի բանկից դրամը յափշտակելուց յետոյ՝ նախաճաշում էին Կարգէրաշի բէկի մօտ։ Յափշտակիչների մօտ գտնվեց 37,000 րուբլի։ Հիւպ. գործակալը իբրև պարգև բանկից ստանալու է 8000 րուբլի։

◆ Վիէննայից հեռագրում են, որ դեռ անցեալ շաբաթ սերբիական դեսպանը նախազգուշացրեց արքիդքսին, թէ երիտասարդ սերբերը պատրաստում են մահափորձ նրա դէմ։

◆ Պարիզի լրագիրները աւստրիական գահաժառանգի սպանութեան առիթով յիշեցնում են, որ յայտնի գուշակող Տէբը մի շարք աղէտներ էր գուշակել Հաբսբուրգեան տան համար։

◆ Սարաէվօյում ընդարձակ ձերբակալութիւններ են ուսանողների շրջանում։

◆ Վիէննայի կամաւորների հաւաքումը դէպի Ալբանիա արշաւանք կատարելու համար թոյլված է արտաքին գործերի մինիստր Բերխտոլդի պահանջով։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ. հինգշ. և շաբթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
Տ. Տ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԻՐԻԿՈՒՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Տ. Տ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0 55

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային եւ աղիքային հիւանդ.։ Էլեկտրոտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—93

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
որ աւարտել է հաշւապահական դասընթացքները, շատ խնդրում է տալ իրան որևէ պաշտօն թեթև ռոճկով։
Հասցէն տեղեկանալ «Մշակի» գրասենեակից։
(ա. օ.) 600. 3—3

ՄԵՂՐԻԻ Ծխական դպրոցի ◆ համար ◆ հարկաւոր է
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ
18 դասով և ռուսաց լեզուի
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
որը աւանդելու է նաև կար ու ձև։
Ցանկալի է, որ լինեն ամուսիններ կամ քոյր և եղբայր։
Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրատուն՝ Լևոն Դանիէլեանին կամ Գ. Մելոյեանին։ (կ.) 621. 2—1

Թիֆլիսի գրավաճառանոցներում ծախվում է
ԱՏՐՊԵՏԻ
Հայ թագաւորների և քաղաքների դրամները
(120 պատկերներով զարդարված)
Ամենահին ժամանակներից մինչև Տրդատ։
Գինն է 5 րուբլի։
(հ.) 561. 3—3

Սամարղանդի ծխ. դպրոցի համար հարկաւոր է
ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ
1) Հայոց լեզուի և 2) Ռուսաց լեզուի, լրացուցիչ առարկաներով։ Ուսուցիչներից մէկը պէտք է եկեղեցական խումբ կազմի. առաւելութիւնը կը տրվի քառաձայնին։ Խումբ կազմողը կունենայ 18 դաս, միւսը՝ 22 դաս։ Վարձատրութիւնը 650-ական րուբլի։ Խնդրի հետ ուղարկել վկայականները կամ նրանց վաւերացրած պատճէնները՝ յիշելով քանի տարի և որտեղ է պաշտօնավարել։ Դիմել Հոգաբ. նախագահ Ս. ք. Սարգսեանցին, կամ աւ. ուսուցիչ Մ. Զաքարեանին։
(օ.մ.) 591. 3—3

Լոյս տեսաւ
«ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»
պարզ և հասկանալի լեզուով ամեն մարդու համար։ Անհրաժեշտ է մանաւանդ գաւառացիներին, որտեղ չը կայ բժիշկ և դեղատուն։ Ամեն տեսակ պատահական փորձանքներ և նրանց օգնելը ամենահեշտ միջոցներով։ Դեղարանով և բացատրութիւններով։ Գինը 30 կ.։ Ծախվում է նաև—«Վեներական ախտերի եւ ծածուկ ցաւերի բժշկարան», նկարներով, բազմաթիւ րէցէպտներով և խորհուրդներով։ Գինը 50 կ.։ «Ծիծաղի ակճոր», անէկդօտներ։ Գինը 20 կ.։ «Ներկարմատի շալվարը», վօդէվիլ։ Գինը 20 կ.։ «Րաֆֆիի» կենսագր. պատկերով։ Գինը 10 կ.։ «Միևնոյն գազանում» պատմուածք։ Գինը 7 կ.։ Դիմել Թիֆլիս, գրավաճառներին, և ինձ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медиц. фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ. Գրքերի գինը և ճանապարհի ծախսի համար 17 կ. մարկաներով առաջուց ուղարկել։
(հ. կ.) 327. 100—20

Пріемъ объявленій
во всѣ мѣстныя и иногородныя періодическія изданія на льготныхъ условіяхъ,
съ разсрочкою платежа.
Михайловскій проспектъ, № 97, кв. 11, телеф. № 9—25. *М. А. ГАЖОНІА.*
(о.м.) 617. 5—1

Բացված է 6 ամսեայ բաժանորդագրութիւն
(Յուլիս ամսվանից մինչև տարվայ վերջը)
Բ. ՏԱՐԻ 1914 Թ.
ՄԱԽԼԱՍ
Բ. ՏԱՐԻ 1914 Թ.
Գրական-երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
որը լոյս է տեսնում գոյնզգոյն ծաղրանկարներով։ Յայտարարութիւններ ընդունվում են ամեն լեզուով։
6 ամսվայ բաժնեգինն է՝ Թիֆլիսում—1 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս—1 ր. 75 կ.։ Արտասահման—10 ֆր.։
1914 թ. յունվարից լոյս տեսած համարների հետ միասին Թիֆլիսում՝ 3 ր. դուրսը՝ 3 ր. 50 կ.։
Առանձին համարը Թիֆլիսում 7 կ. Թիֆլիսից դուրս 8 կ.։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція журнала «МАХЛАСЪ», Петхаинская ул. № 20.
Արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal «MAKHLAS».
Խմբագիր-Հրատարակիչ՝ Տիկ. ՍԱԹԵՆԻԿ ԼԱՇՔԱՐԵԱՆ
(ն. հ. կ.) 584. 6—4

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնօվօդսկայա փ., տ. Աւան-Ուզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկական ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ (մոտորներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ոյժին 1/2 ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատօրային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «ԴԻՆԱՄՕ» ընկ. գործարանից ամեն տեսակի։
Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(հ. կ.) 551. 0—6

Մեծածախս մրգավաճառների ուշադրութեան!
Փոխարէն փայտէ թեփի, որ մրգերին տալիս է անդուրեկան և անմաքուր տեսք, առաջարկում ենք մրգերը փաթաթել խցանային թեփով։ Ըստ պահանջման նմուշը ուղարկում ենք ձրի։ Թիֆլիսի գրասենեակ Акціон. О-ва Пробочной Мануфактуры Викандеръ и Ларсонъ. Тифлисъ. Головин. пр. № 9. (հ.) 597. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный